AZG NEW 1.QXD 8/19/2009 11:31 PM Page 1

Azg Վազ

20 ՕԳՈՍՏՈՍ 2009 ՀԻՆԳՇԱԲԹԻ 147 (4289)

ISSN: 1829-1651

«Եվրոտեսիլի» առնչությամբ հարցախնություն Ադրբեջանում

Դրա պատճառը հայ երգչուհիների օգտին ուղարկված SMS-հաղորդագրություններն են

Այդ մասին օգոստոսի 18-ի թղթակցությամբ տեղեկացրել է Հարավային Կովկասում BBC-ի սեփական թղթակից Թոմ Էլսմոնսը: Ահա թե ինչ է գրել նա BBC-ի թուրքական ծառայության կայքէջում. «Եվրոտեսիլի երաժշտական մրցույթ-փառատոնում հարեւանները որպես կանոն քվեարկում են միմյանց օգտին, ինչը մեծապես հուզում է մյուս երկրներին: Իհարկե, կան նաեւ բացառություն կազմող հարեւաններ, ինչպես, ասենք՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի պատճառով լարված հարաբերությունների մեջ գտնվող Հայաստանն ու Ադրբեջանը: Մայիսին Մոսկվայում կազմակերպված երաժշտական մրցույթի եզրափակիչում Հայաստանի օգտին հաղորդագրություն էր ուղարկել 43 ադրբեջանցի: Ըստ երեւույթին, ադրբեջանական իշխանությունները խիստ մտահոգիչ են համարել այս ցուցանիշը, որ ոստիկանությունը հարցաքննել է այս 43 հոգուն:

Որքան էլ «Եվրոտեսիլը» չառնչվի քաղաքականությանը, որոշ ադրբեջանցիների՝ Հայաստանի օգտին քվեարկելու հանգամանքը լուրջ մտահոգություն է պատճառել ադրբեջանական իշխանություններին, այն էլ՝ երաժշտական մրցույթից ավելի քան երեք ամիս հետո: Դրա համար էլ ադրբեջանական ոստիկանությունը հայ երգչուհիների օգտին հաղորդագրություն ուղարկածներին մեղադրել է «հայրենասիրությունն անտեսելու եւ երկրի անվտանգության համար սպառնալիք հանդիսանալու» մեջ:

Հակառակ դրան, Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության խոսնակը հայտարարել է, որ հարցաքննությունն իրականացվում է՝ պարզելու համար, թե նրանք մրցույթում նախապատվությունը ինչո՞ւ են տվել Հայաստանի ներկայացուցիչներին:

Անկախ դիտորդներն այս հարցաքննությունը դիտարկում են լարվածությունը սրելու ադրբեջանական դրսեւորում եւ դատապարտում են Ադրբեջանին:

Մեր կողմից հիշեցնենք, որ ադրբեջանցիները նույն մրցույթում Հայաստանից ստացել էին շատ ավելի մեծ թվով ձայներ:

Հ. Ղ.

Արցախի հարցը կարո՞ղ է դառնալ ներքաղաքական սրացումների պատճառ

ՄԱՔԻԵՏԱ ԹԱՀՃԱՏՐՅԱՆ



Բոլորն այժմ խոսում են այն մասին, թե Արցախի հարցը կարող է լարումների եւ ներքաղաքական սրացումների պատճառ դառնալ քաղաքական աշնան սկզբին: Այդ սպասումները ծայր առան եւ փիչ-փիչ սաստկացան իրար հաջորդող մի շարք իրողությունների արդյունքում՝ համանախագահ երկրների նախագահների հայտարարությունը, մադրիդյան սկզբունքների քողազերծումը, Բրայզայի իրատեսությունը եւ հետին նպատակներով արվող հայտարարությունները բերում են այն եզրակացության, որ, այո, ինչ- որ բան այս խնդրում թափ է հավաքում, եւ անգամ ենթադրություններ են արվում, որ աշնանը ինչ-որ համաձայնագիր կամ ճանապարհային քարտեզի նման բան է մատուցվելու կողմերին: Կլինի՞ դա ավելի շուտ հետագա մտադրությունների վերաբերյալ ինչ-որ փաստաթուղթ, որը, նայած այնտեղ ամրագրված դրույթներին, կարող է ոչինչ չասող թուղթ լինել կամ մեզ համար վտանգավոր պարտադրանքներ պարունակել, թե՞ ոչ մի համաձայնագիր էլ չի լինի, սա եւս ենթադրությունների մակարդակում է: Բայց հստակ արդեն ուրվագծվում է՝ օբյեկտիվ թե սուբյեկտիվ դրդապատճառներով, ուզենք թե չուզենք, դարաբաղյան կարգավորման բանակցային հերթական հանգրվանը դառնալու է ներքաղաքական սրացումների հիմք եւ լավ նվեր օրվա իշխանության ընդդիմախոսներին: Իսկ իշխանությունը սիրված կլինի խնդիրները կարգավորել երկու ճակատով՝ դիվանագիտական բոլոր հնարավորություններն օգտագործելով, որպեսզի եթե համաձայնության փաստաթուղթն անխուսափելի է, առավելագույնս հայանպաստ դրույթներ այնտեղ ամրագրվեն, իսկ եթե դա հնարավոր չի լինելու՝ բոլոր միջոցներով սատուս քվոն պահպանելու միջոցներ որոնել, զուգահեռ՝ նաեւ ընդդիմախոսներին պատասխանելու համաչափությունը պահպանել: Մեկ օր առաջ արտահայտված ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն իրեն հատուկ ոճով ասել էր, թե իշխանություններն արդեն հանձնել են Ղարաբաղը, իսկ նրա խոսքի երանգներից հասկանալի էր, որ աշնանն այդ թեմայով ընդդիմությունը հույս ունի վերակենդանանալ:

Տես էջ 2

Ահմադինեժադը կհրապարակի կառավարության նորացված կազմը

Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը այսօր պատրաստվում է հրապարակել իր կառավարության նորացված կազմը: Ավելի վաղ Ահմադինեժադը հայտարարել էր, որ պատրաստվում է առնվազն 3 կին նախարարի թեկնածու առաջադրել կառավարությունում: Կին նախարարների նշանակումը 21 անդամներից բաղկացած կառավարությունում Իրանի Իսլամական Հանրապետության 30-ամյա պատմության մեջ աննախադեպ քայլ կլինի: Որոշ աղբյուրներ պնդում են, թե արգդրծնախարարի պաշտոնում կարող է առաջադրվել Իրանի միջուկային հարցերով հատուկ բանագնաց Սայեդ Ջալիլին: Արեւմուտքում մտավախություն կա, որ Ջալիլին նշանակմամբ Իրանի հետ հարաբերություններն ավելի են սրվելու: Սայեդ Ջալիլին Իրանի միջուկային ծրագրի բանակցությունների ընթացքում կարծր մոտեցումների տեր եւ զիջումների չգնացող դիվանագետի համբավ է ձեռք բերել: Նախագահի առաջադրած թեկնածուներին պետք է հաստատի Իրանի խորհրդարանը: Սպասվում է, որ Մեջլիսը որոշակի վերապահումներով կմոտենա Ահմադինեժադի առաջադրած թեկնածուներին:

Իրանն ու Ռուսաստանը համաձայնության են եկել Կասպից ծովի կարգավիճակի հարցում

ԱՍՏՐԱԽԱՆ, 19 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդեւի եւ Իրանի իրավասուների մասնակցությամբ Կասպից ծովի կարգավիճակի վերաբերյալ Աստրախանում կազմակերպված քննարկումների արդյունքում Թեհրանն ու Մոսկվան համաձայնություն են ձեռք բերել ծովի մակերեսը ափ ունեցող երկրների միջեւ հավասարապես կիսելու մասին:

Թուրքական «Դունյա բուլթենի» թերթի համաձայն, հավաքին մասնակցել են ՌԴ ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովը, անվտանգության դաշնային ծառայության մատչային ծառայության պետ Պրոնիչեւը, Գազպրոմի նախագահ Միլլերը, Լուկոյլի նախագահ Վահիդ Ալեքպերովը, ինչը ռուսական մամուլը «անսպասելի իրադարձություն» է գնահատել:

Կրեմլի հիմնական նպատակը էներգետիկ նախագծերից իրեն դուրս թողնելը կանխելն է, Կասպից ծովում ափ չունեցող երկրներին տարածաշրջանում ռազմական ներկայություն ունենալը չթույլատրելն է: Մասնագետները հայտարարել են, որ այդ հարցում Ռուսաստանի եւ Իրանի շահերը համընկնում են:

Ըստ թերթի, տարածաշրջանում ԱՄՆ-ի ակտիվ քաղաքականությունը մեծացրել է Ռուսաստանի եւ Իրանի մտահոգությունները: Ռուսաստանը ափամերձ 5 երկրների հետ ցանկանում է պահ առաջ լուծել Կասպից ծովի կարգավիճակի խնդիրը, որի հետ ռուսական ռազմանավերը Կասպից ծովի բոլոր ափերին մոտենալու իրավունք ձեռք կբերեն, քանի որ Ռուսաստանից բացի, ծովափ ունեցող ոչ մի երկիր ռազմական նավատորմ չի կարողանում ստեղծել:

Ռուսաստանին մտահոգող հարցը Ադրբեջանի եւ Թուրքմենստանի ծովային ուժերի արդիականացման համար ԱՄՆ-ի կողմից աղբյուր հայթայթելն է: Ի տարբերություն ափամերձ այլ երկրների, Ռուսաստանն ու Իրանը համաձայնության են եկել ծովի մակերեսը հավասարապես կիսելու մասին:

Ռուսաստանի եւ Իրանի միջեւ Կասպից ծովում 30 նավերի մասնակցությամբ ռազմական զորավարժություններ կազմակերպելու գործողությունները մասնագետները գնահատել են որպես «երկու երկրների ռազմական դաշինք ստեղծելու ձեռնարկումներ», հայտնել է թուրքական թերթը:

Յուշենկոն չի մասնակցի ԱՊՀ երկրների ղեկավարների հավաքներին

Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յուշչենկոն որոշել է այլեւս չմասնակցել ԱՊՀ երկրների ղեկավարների հավաքներին: Ռուսաստանյան լրատվամիջոցները հաղորդում են, որ Յուշչենկոն չի մասնակցելու Քիշնեւում հոկտեմբերի 9-ին նախատեսված ԱՊՀ երկրների ղեկավարների հանդիպմանը:

Միջինարեւելյան խաղաղ կարգավորման նոր ծրագիր

Դա ԱՄՆ-ում առաջ է քաշվել նախկին նախագահ Ջիմի Քարտերի գլխավորությամբ

Միջինարեւելյան խաղաղության ինստիտուտում ԱՄՆ-ի երբեմնի նախագահ Քարտերի, նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի, անվտանգության գծով նախագահի նախկին խորհրդականներ Բրենդ Սքոուկրոֆի եւ Զբիգնեւ Բժեզինսկու մասնակցությամբ մշակված այս ծրագիրը ներկայացվել է Բարաք Օբամային: Դա, ինչպես երեկվա համարում նշել է «Յուրիթեթը», նախատեսում է Իսրայելի վերադարձը մինչեւ 1967-ի վեցօրյա պատերազմը գոյություն ունեցող սահմանները, աղաղակմանացման պաղեստինյան պետության ստեղծումը, 1947-48 թթ. հայրենիքից հեռացած պաղեստինցի փախստականներին վերադառնալու իրավունք շնորհելու փոխարեն փոխհատուցման վճարումը, ինչպես նաեւ Երուսաղեմի հռչակումն ընդհանուր մայրաքաղաք Իսրայելի եւ Պաղեստինի համար:

Նախագահ Օբաման այս ծրագիրը քննարկել է վերջերս ԱՄՆ այցելած Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքի հետ: Իսկ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն դեռեւս հունիսին դրականորեն էր արտահայտվել ապառազմականացված պաղեստինյան պետության ստեղծման առնչությամբ:

Հ. Ղ.

Արցախի թեմի վերաբացման 20-ամյակը

Սեպտեմբերի 27-ին եւ 28-ին Հայ առաքելական եկեղեցին նշում է Արցախի թեմի վերաբացման 20-ամյակը: Գանձասարի օծմամբ 20 տարի առաջ վերաբացվեց Արցախի թեմը: Այդ առթիվ Արցախում տեղի ունենալիք միջոցառումներին մասնակցելու են Ամենայն հայոց կաթողիկոսը, Հայաստանի պետական բարձր պաշտոնյաներ, հյուրեր սփյուռքից, բարեւարներ: Տոնը համընկնում է Վարագա Սուրբ Խաչի տոնին, իսկ այդ առթիվ սեպտեմբերի 27-ի Սուրբ պատարագը կհեռարձակվի Արցախի հեռուստատեսությամբ:

«Աշխարհում ընդհանուր շահեր ունեցող երկրները վերլուծական համատեղ կենտրոններ են ստեղծում»

Հայտարարել է թուրք վերլուծաբանը՝ անդրադառնալով Ադրբեջանի հետ Թուրքիայի հարաբերություններին

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օգտվելով Հայաստանի հետ այսպես կոչված մերձեցման գործընթացի ընձեռած հնարավորություններից՝ Թուրքիան հանդես եկավ «Կովկասի կայունության եւ համագործակցության պլատֆորմ» ստեղծելու նախաձեռնությամբ եւ հարավսլավական պատերազմից հետո Հարավային Կովկասում սկսեց քաղաքական ակտիվություն դրսեւորել: Այնուհետեւ նա ընտրվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ, իսկ Հայաստանի եւ Շվեյցարիայի արտգործնախարարությունների հետ ապրիլի 22-ի միաժամանակյա համատեղ հայտարարությամբ փաստի առջեւ կանգնեցրեց նախագահ Բարաք Օբամային, որ ապրիլի 24-ի ուղեղձում զերծ մնա «ցեղասպանություն» բառի արտասանումից:

Այլ կերպ, Թուրքիան կատարեց Հայաստանի հետ «մերձեցմամբ» պայմանավորված քաղաքական բոլոր երեք առաջադրանքները, ապա պատճառաբանելով, թե այս մերձեցումը տգնաղ է պատճառել եղբայրական Ադրբեջանին, հայկական սահմանի բացման համար վերսին ելակետ ընդունեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորումը, իսկ հայ-թուրքական հարաբերությունների հաստատումը պայմանավորեց Հայաստան-Ադրբեջան հարաբերություններով:

Այսպիսով, 2008-ի սեպտեմբերին նախագահ Աբդուլլահ Գյուլի երեւանյան այցով սկզբնավորված մերձեցման գործընթացը, որն իրականում երկխոսության գործընթաց էր, վերադարձավ ելման կետ: Այդ ընթացքում դիվանագիտական հարաբերությունների կարգավորման համար Հայաստանին առաջադրվող թուրքական նախապայմանները մնացին ուժի մեջ: Սա նշանակում է, որ ելման կետ վերադարձած երկխոսությունը վերականգնելու համար կողմերին անհրաժեշտ է նոր առիթ, եւ նախագահ Գյուլի ֆուտբոլային պատասխան հանդիպումը Թուրքիայում դիտելու հրավերը Սերժ Սարգսյանին հազիվ թե այդ առիթը տա, եթե նույնիսկ ՀՀ նախագահը դրական արձագանքի հրավերին: Երկու դեպքում էլ շահելու է Թուրքիան:

Տես էջ 2

AZG NEW 2.QXD 8/19/2009 11:05 PM Page 1

«Սերժ Սարգսյանը պետք է մեկնի Թուրքիա»

Թուրքագետ, **«Ազգ»** օրաթերթի քաղաքական վերլուծաբան **Հակոբ Չաֆրյանը** նկատում է, որ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պետք է մեկնի Թուրքիա: Եթե նախագահը, համաձայն վերջին հայտարարության, հրաժարվի այցելել Թուրքիա, ապա միջազգային հանրությունը Հայաստանին կհամարի կայունությանը, երկխոսությանն ու համագործակցությանը դեմ անհաշտ երկիր, որ չի ցանկանում վերականգնել հարաբերությունները:

«Թուրքական կողմն անպայման կհայտարարի, որ Հայաստանի նախագահը հրաժարվում է ներկա գտնվել ֆուտբոլային հանդիպմանն ու պահանջներ է առաջ քաշում, այն դեպքում, երբ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը առանց որևէ նախապայմանի ընդունել է հրավերն ու այցելել Հայաստան»,- նկատեց Հակոբ Չաֆրյանը՝ հավելելով, որ Հայաստանը փորձ երկիր է եւ չի կարող ամեն ինչի հակադրվել:

Նա հիշեցրեց, որ թուրքերը շատ էին տխրել, երբ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման ապրիլին Թուրքիա կատարած այցելությանը եկել էր առանց տիկնոջ, ինչը կարծես թե վրդովվեցրել էր թուրքական վերնախավին, միաժամանակ հավելելով, որ Գյուլը Հայաստան եկավ կնոջ ուղեկցությամբ, ինչը միջազգային շրջանակներում համարվում է տվյալ երկրին ու այցելությանը մեծ կարեւորություն տալ: Փորձագետը վստահ է՝ եթե այժմ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների կարգավորման բանակցությունները ընդհատվեն, ապա դժվար կլինի դրանք վերականգնել:

Չաֆրյանը նկատում է, որ Հայաստանի եւ Թուրքիայի իշխանություն-



ների վրա ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն ճնշում են գործադրում, որպեսզի հարաբերությունները կարգավորվեն, սակայն թուրքական կողմի վրա պատշաճ ճնշում չի գործադրվում, եւ Թուրքիան կարողանում է հետցությամբ հաղթահարել այդ ազդեցությունը: Չաֆրյանը հիշեցրեց Կիպրոսի հարցը. Թուրքիան ցանկանում է դառնալ ԵՄ անդամ, սակայն ԵՄ անդամ Կիպրոսին՝ որպես պետության, չի ճանաչում եւ ամենայն հավանականությամբ զիջումների չի գնա: «Միջազգային հանրությունը փորձում է չիհիշել, որ հենց Թուրքիան, խախտելով միջազգային բոլոր նորմերը, 1991-ից փակել է սահմանն ու նախապայմաններ է առաջ քաշում Հայաստանի հետ հարաբերությունները կարգավորելու համար»,- նկատում է Հակոբ Չաֆրյանը:

Անդրադառնալով վերջին շրջանում նկատվող ռուս-թուրքական հարաբերությունների մերձեցմանը, թուրքագետը հավաստիացրեց, որ ԱՄՆ-ն այդ մերձեցումը թույլ չի տա եւ ճնշում կգործադրի Թուրքիայի վրա:

«Մերձեցման որոշակի փուլում Թուրքիան սիրված կլինի ենթարկվել Վաշինգտոնի կամքին եւ կանգ առնել՝ զերծ մնալով Ռուսաստանի հետ հեռագա մերձեցումից»:

Անդրադառնալով Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի (ՌԱՀՀԿ) տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանի հայտարարությանը, թե Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ գաղտնի բանակցություններ են ընթանում, որ Ռուսաստանին իրավունք է տրվելու օգտագործելու թուրքական օդային տարածքը Հայաստանում տեղակայված ռուսական ռազմահենակետին զենք-զինամթերք մատակարարելու համար, Չաֆրյանն այն անվանեց տարօրինակ: «Գաղտնի պայմանագրի մասին է խոսվում, իսկ գաղտնի պայմանագիր ստորագրելու համար ծավալվող բանակցություններն ավելի գաղտնի են լինում: Զարմանում եմ, թե Ռիչարդ Կիրակոսյանն ինչ միջոցներով կամ ո՞ր պետության հետախուզական ծառայությունների տվյալներից է այդպիսի տեղեկություն իմացել: Երեւանում նստել եւ իմանալ, թե թուրքերը ռուսների հետ ինչ գաղտնի բանակցություններ են ծավալում, ինչ նպատակով... դա նույնիսկ Հայաստանի պես պետությունը չի կարող իմանալ: Դա կարող են իմանալ ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը, «Մոսադը»: Կիրակոսյանը որտեղի՞ց է իմացել, շատ տարօրինակ է թվում»:

Նա անիրատեսական համարեց, որ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան կարող է ՌԴ-ի հետ նման գաղտնի պայմանագիր ստորագրել:

Հ. Հ.

«Հայաստանը պետք է հայտարարի, որ Թուրքիան տաղալել է բանակցությունները»

ՀՅԴ հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու **Կիրո Մանոյանը** համոզված է, որ հոկտեմբերի 14-ին Սերժ Սարգսյանը չի գնա Թուրքիա, եթե հավատարիմ մնա խոստմանը՝ Հայաստան-Թուրքիա ֆուտբոլային հանդիպումը դիտելու գնալ կա՛մ բաց սահմանով, կա՛մ՝ եթե լինենք սահմանի բացման նախաշեմին:

Դաշնակցական գործիչը համոզված է, որ մինչեւ հոկտեմբերի 14-ը բավական փիչ ժամանակ է մնացել հայ-թուրքական սահմանը բացելու կամ դրան նախապատրաստվելու համար: Մանոյանը ճիշտ քայլ է համարում, որ Հայաստանը չսպասի մինչեւ ֆուտբոլային հանդիպումը եւ հենց այսօր հայտարարի, որ Թուրքիան ձախողել է բանակցությունները:

«Հայաստանը պետք է հայտարարի, որ Թուրքիան տաղալել է բանակցությունները, որովհետեւ դրել է նախապայման: Խաղի կանոնները խաղի կեսին փոխել է, հետեւաբար Հայաստանի համար այս բանակցությունները կասեցված են»,- նկատեց Մանոյանը:

Դաշնակցական գործիչը համոզված է, որ Թուրքիայի համար նույնքան կարեւոր է ցույց տալ, թե Հայաստանի հետ հարաբերություններում ինչ-որ գործընթաց է տեղի ունենում, որքան բուն կարգավորումը:

«Թուրքիան ուզում է աշխարհին ցույց տալ, որ Հայաստանի հետ խոսում է, եւ այլ պետությունների միջամտության կարիքը չի զգացվում»:

Կիրո Մանոյանը նաեւ հավելեց, որ արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի հրաժարականը մնում է ՀՅԴ օրակարգում:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Աշխարհում ընդհանուր շահեր ունեցող երկրները վերլուծական ...»

1-ին էջից

Նախագահ Սարգսյանի դրական արձագանքը նա պայմանավորելու է Հայաստանի նկատմամբ անկանխակալ մոտեցմամբ եւ միջազգային հանրությանը մատուցելու իբրեւ բարի կամքի դրսեւորում: Իսկ բացասական արձագանքի դեպքում ի լուր աշխարհի հայտարարելու է, որ հայկական կողմը Թուրքիա այցելելու համար, այն էլ՝ ոչ մի պարտավորվածություն չենթադրող ֆուտբոլային հանդիպում դիտելու համար, թուրքականին նախապայման է առաջադրում, ուստի Հայաստանը՝ որպես անհաշտ երկիր, Հարավային Կովկասում կայունությանը, խաղաղությանն ու համագործակցությանը նպաստելու մտադրություն չունի:

Թվում է, թե միջազգային ուժերը, մասնավորապես ԱՄՆ-ն ու Եվրամիությունը, ողջամտորեն կշրջանցեն երկխոսության սկզբնական փուլում Հայաստանի հանդեպ Թուրքիայի սանձնած պարտավորությունները՝ սահմանի բացման եւ ապաշրջափակման առումով եւ ըմբռնումով կվերաբերեն թուրքական նշված նկրտումներին, որպեսզի ճնշումների թիրախ դառնա Հայաստանը: Դրան, ինչ խոսք, հանդուրժողականությամբ կարձագանքի Հայաստանի ռազմական եւ ռազմավարական դաշնակից Ռուսաստանը:

Այս ամենը՝ Ադրբեջանի հետ մերձեցումը միջպետականից ժողովուրդների հարթություն տեղափոխելու լայն հեռանկարներ կբացի Թուրքիայի առջեւ, որոնց նախադրյալներ ստեղծմանը թերեւս ձեռնամուխ է եղել Միջինարեւելյան ռազմավարական հետազոտությունների կենտրոնը՝ ORSAM-ը: Օգոստոսի 18-ին հենց այդ հարցին է անդրադարձել կենտրոնի տնօրեն Հասան Քանբոլաթը: Նա, Նյու Յորքի թուրքական կայքէջի վկայությամբ, ANKA գործակալությանը տված հարցազրույցում ասել է, որ Ադրբեջանի հետ Թուրքիայի բարեկամությունը չի կարելի սահմանափակել պետական եւ քաղաքական գործիչների ձեռնարկումներով, այլ պետք է դրանում ներգրավել երկու ժողովուրդներին, որպեսզի նրանք գիտակցեն ապագան համատեղ կերտելու անհրաժեշտությունը:

Քանբոլաթը, հենվելով Ռազմավարական հետազոտությունների միջազգային կենտրոնի՝ USAK-ի հարցախույզի արդյունքների վրա գոհունակությամբ է արձանագրել, որ թուրք ժողովուրդը բարեկամ երկրների մեջ առաջնային է համարում Ադրբեջանին, ապա եւ ավելացրել. «Այս հանգամանքը ողջունելի է, որովհետեւ մինչեւ վերջերս ոմանք փորձում էին արհեստական ճգնաժամ առաջացնել եղբայրական երկու երկրների հարաբերություններում»:

Պատասխանելով «Ինչպե՞ս է կառուցվելու երկու երկրների ընդհանուր ապագան» հարցին, Քանբոլաթը նշել է. «Ժամանակն է, որ մշակվի բարեկամությունից եւ եղբայրությունից ռազմավարական գործակցությանն անցնելու համար անհրաժեշտ ճանապարհային քարտեզ»: Նա, ողջունելով թուրք-ադրբեջանական հարաբերությունների «մեկ ազգ, երկու պետություն» սկզբունքով կառուցումը, անդրադարձել է նաեւ թերացումներին, որոնցից առանձնացնելով այն, որ Թուրքիան միակողմանի հանել է ադրբեջանցիների նկատմամբ կիրառվող այցագրային ռեժիմը, հակառակ դրան Ադրբեջանը ոչ միայն չի հանում, նույնիսկ Թուրքիայի քաղաքացիների նկատմամբ դա խստացնում է:

Քանբոլաթը լուրջ բացթողում է համարել Հայաստանի նկատմամբ թուրք-ադրբեջանական համատեղ քաղաքականության բացակայությունը: Նա ընդգծել է նաեւ աշխարհում ընդհանուր շահեր հետապնդող երկրների վերլուծական համատեղ կենտրոններ ստեղծելու հանգամանքը՝ նշելով, որ Անկարան աջակցում է Ադրբեջանում գործող թուրքական կազմակերպություններին, իսկ Բաքուն՝ ոչ:

ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արցախի հարցը կարո՞ղ է ...

1-ին էջից

ՀՅԴ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արսյուշ Շահբազյանը, Տեր-Պետրոսյանի արտահայտության առիթով մեր հարցին պատասխանելիս նկատեց, թե գուցե իրենց ձեռնտու է այդպես ասել եւ ձեռքերը թափ տալ խնդրից. «Ոչ, մենք համաձայն չենք ու մինչեւ վերջ չենք համաձայնի նման ծրագրի. գուցե նրանց համար, ովքեր ցանկանում են որ առաջ ազատվել այդ խնդրից, այդպես հեշտ է ասելը, սա նշանակում է հաշտվել ամենավատթարագույն լուծման հետ: Մենք էդպես չենք մտածում», ասաց նա: Բայց եւ, ըստ ՀՅԴ-ականի, ընթանում են գործընթացներ, որոնք եթե իրենց հունով առաջ գնան՝ կհանգեցնեն որոշակի վտանգավոր լուծումների. «Մենք չարագուշակ ենթադրություններ անելու հակված չենք, բայց ամեն դեպքում վտանգը կա, որ իսկապես կարող է մեզ համար վտանգավոր պայմաններով պայմանագիր ստորագրվել, որի համար, իհարկե, պետք է ձայն բարձրացնել: Էն, ինչ-որ դրված է բանակցությունների սեղանին, ասել ենք, մեզ համար պարուսակում է լուրջ վտանգներ»: Բայց ի՞նչ փաստաթուղթ է դրված սեղանին՝ ո՞վ գիտի: Շահբազյանն ասաց, թե ենթադրվում է, որ մադրիդյան սկզբունքները, համանախագահների հայտարարությունը հիմք են ծառայելու առաջարկվող փաստաթղթի համար, եւ այդ տրամաբանությամբ պայմանագրի կնքումը մեզ համար վտանգավոր է. հայկական կողմը պետք է առաջարկի հստակեցնել սկզբունքները եւ իր պայմանները պետք է առաջադրի: ՀՅԴ-ն աշնանը ծրագրել է հրապարակային միջոցառումներ, որոնք հետեւողական բնույթ են ունենալու՝ հրավիրելով հասարակությանը զգոն հետեւելու իրադարձությունների զարգացմանը: Ինչ վերաբերում է ներքաղաքական սրացումներին, ըստ Շահբազյանի, դժվար է նման ենթադրություններ անել, բայց Ղարաբաղի հարցում եթե, Աստված մի արասցե, զարգացումները վատագույն սցենարով գնան, չեն բացառվում նաեւ սրացումները:

Բայց խնդիրը կարող է դառնալ նաեւ ներքաղաքական զենք՝ միմյանց վրա ճոճելու, պոպուլիզմի տարրերով. «Շատ անցանկալի կլինի, որ այդպես լինի, սա այն խնդիրը չէ, որի հետ կարելի է ներքաղաքական շահարկումներ անել եւ մասնավոր խնդիրներ լուծել: Պիտի նայել՝ ի՞նչ է իրական վիճակը եւ իսկապես անաչառորեն խնդիրները վեր հանել, ոչ թե այն սարքել ներքին բազարների առարկա: Հետեւում ենք գործընթացին եւ պարզաբանումներ ենք ուզելու իրավասուներից, Նալբանդյանից ցանկացած զարգացման վերաբերյալ»:

ՀՀԿ-ական, ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանն այլ տեսանկյունից դիտարկեց խնդիրը՝ յուրաքանչյուր տարի ամռանը ընդդիմադիր քաղաքական այրերը նույն ոգնդումներն են անում, թե տեսք ինչ է լինելու աշնանը. ներքաղաքական առումով աշնանը որեւէ ցնցում, ըստ նրա, չի լինի, ներքաղաքական կյանքը կզարգանա շատ ավելի բնականոն հունով, քան մինչեւ այժմ եղել է:

Արցախի խնդրի բանակցային գործընթացի վտանգների մասին խոսելիս՝ Ս. Նիկոյանն անդրադարձ արեց մադրիդյան սկզբունքների բացահայտման դրական կողմին. ըստ նրա՝ առաջին անգամ մադրիդյան սկզբունքներում կա Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամարտահայտության իրավական պարտադիր ուժ ունենալու հանգամանքը, ինչը մինչեւ հիմա որեւէ միջազգային փաստաթղթում չի եղել: Իսկ նրա մտահոգությունները վերաբերում են կամարտահայտության մեխանիզմներին. «Շատ կարեւոր է՝ ինչպե՞ս, որտե՞ղ, ե՞րբ, ի՞նչ միջոցներով է դա իրագործվելու. հազարումի հարցեր կան այստեղ»: Նրա երկրորդ մտահոգությունը վերաբերում է ԼՂ միջանկյալ կարգավիճակին, որից շատ բան է կախված: Եթե միջանկյալ կարգավիճակը մոտ է անկախությանը, դա շատ լավ կլինի, եթե միջանկյալ կարգավիճակը Ադրբեջանի կազմում ինչ-որ իրավասություն է՝ դա վտանգավոր է: Մտահոգիչ է նաեւ բոլոր ազատագրված տարածքների վերադարձի խնդիրը՝ եթե իրոք այդպես լինի, խոսքը հատկապես վերաբերում է Հայաստան-Ղարաբաղ ցամաքային կապին՝ Նիկոյանը հարցնում է, թե ինչպիսի՞ն է դա լինելու. «Կան շատ մտահոգիչ հարցեր, բայց խնդիրը հետեւյալն է՝ կան տարբերակներ. ա) ոչինչ չանել կամ ձեւ անել, որ բանակցում ենք, բ) չբանակցել եւ պատրաստվել պատերազմի, գ) փորձել բանակցել եւ անել մախսիմում հնարավորը: Հիմա կարծես թե Սերժ Սարգսյանը գնում է երրորդ ճանապարհով՝ բանակցում է եւ փորձում է անել մախսիմում հնարավորը, սա է խնդիրը: Իսկ որ որոշ մարդիկ աղմկում-աղաղակում են, որ այ, վայ, ծախեցին, էս արեցին, էն արեցին՝ թող իմանան. որեւիցե մեկը չի փորձի ինքնուրույն այդ խնդիրները լուծել, դա կորոշեն ԼՂ ժողովուրդը եւ Հայաստանի ժողովուրդը»:

ԲՀԿ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արամ Սաֆարյանն էլ «Լրագիր» ինտերնետային պարբերականին երեկ ասել էր, թե ինչո՞ւ ալեկոծվի քաղաքական դաշտը, երբ դեռ դիվանագետները դիվանագիտական ճանապարհով պետք է հարթեն խնդիրները, եւ այդ ալեկոծությունները միայն մեկ նպատակ են հետապնդում՝ իշխանության համար պայքարում ունենալ լավ ելակետ: Սաֆարյանի համար անընդունելի է, որ ԼՂ խնդիրը Հայաստանի ներսում դառնա իշխանության համար պայքարի կարեւոր քարտ: Մադրիդյան սկզբունքներում առաջադիմականն, ըստ նրա, առաջին անգամ ինքնորոշման իրավունքի մասին խոսք գնալու պահն է, բայց միակողմանի զիջումներ պոկելը ՀՀ-ից, նախքան ԼՂ ինքնորոշման իրավունքի վերաբերյալ որեւէ համաձայնության ձեռքբերումը, Սաֆարյանը հայերի համար կործանարար է համարում:

Վերջնական կարգավորման սպասումին էլ նա չի հավատում՝ շատ ճշտելիք խնդիրներ կան, խոսքը հավանաբար միջշրջանակային համաձայնագրի ստորագրման մասին է, որը կողմերի հետագա քայլերի կանխորոշմանն է վերաբերելու:

Այս մի քանի կարծիքներով, իհարկե, դեռեւս դժվար է եզրակացնել՝ աշնանը թեժ է լինելու, թե՝ ոչ այնքան, բայց կարծիքների առումով դեռ երկար ճանապարհ ենք անցնելու:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 8/19/2009 10:02 PM Page 1

Հնդկաստանից ներմուծում ենք անգամ սասկած գոմեշի միս

Հանուն 10 տոկոս ավելի շահութաբերության

Այս փաստերի մասին երեկ հայտարարվեց կառավարությունում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ՝ արձանագրելով, որ մսամթերք ներմուծող հայկական 15 կազմակերպությունների համար բացարձակապես որեւէ նշանակություն չունի, թե ինչ ազդեցություն կունենա նրանց ներկրած միսը մեր բոլորի առողջության վրա:

Բացելով խորհրդակցությունը, վարչապետ **Տիգրան Սարգսյանը** տեղեկացրեց, որ Հնդկաստանից ներմուծվող մսի որակի ուսումնասիրության նպատակով երկու անգամ այդ երկիր է մեկնել մեր մասնագետների պատվիրակությունը: Պատվիրակության անդամներն այն եզրակացությանն են եկել, որ հիմնականում երշիկեղենի մեջ օգտագործվող հնդկական գոմեշի միսը կարող է լինել անորակ: Վարչապետը հայտնեց, որ այդ ռիսկը նկատի ունենալով, շաս երկրներ եւ մասնավորապես Եվրոմիությունը արգելում են հնդկական մսի ներմուծումը: Ուստի Տիգրան Սարգսյանը նշեց, որ պետք է թույլատրվի Հայաստան ներմուծել միայն կառավարման եւ որակի միջազգային սերտիֆիկատ ունեցող կազմակերպությունների արտադրած մսամթերքը: Միաժամանակ, վարչապետն ընդգծեց, որ մեր ներմուծողները դիմում են զեղծարարության, որը բացահայտել է պետեկամուտների կոմիտեն: Նրանք շարունակում են ներմուծել նույն անորակ միսը, որի մեջ շաս հաճախ լինում է նաեւ սասկած եւ սառեցրած գոմեշի միս, եւ նրա վրա նշում սերտիֆիկատ ունեցող կազմակերպությունների անվանումը: Տիգրան Սարգսյանը փաստեց, որ այդ միսը, էժան լինելով, ոչ միայն վնասում է մեր առողջությանը, այլեւ Հայաստանում անասնաբուծության զարգացմանը: Միաժամանակ, վարչապետը հավանական համարեց երշիկեղենի գների շուրջ 30 տոկոսով բարձրացումը, եթե անմիջապես արգելվի մսի ներմուծումը: Խոսքը տարեկան 15 հազար տոննա ներմուծվող մսի մասին է:

Հնդկաստան կատարած այցելության եւ տեղում ուսումնասիրությունների վերաբերյալ մանրամասներ ներկայացրեց կառավարության աշխատակազմի ղեկավար **Աշոտ Վահանյանը**: Նա տեղեկացրեց, որ Հնդկաստանում իրենց է տրամադրվել 17 կազմակերպությունների ցանկ, որոնք ունեն վերոնշյալ սերտիֆիկատները: Սակայն այս տարի Հայաստան ներմուծված մոտ 6 հազար տոննա մսի միայն 21 տոկոսն է այդ կազմակերպություններից գնվածը: Բանն այն է, որ ավելի էժան եւ անորակ մսի 1 տոննան 150-300 դոլար ավելի էժան է: Այդ միսն արտադրվում է հեռնախորշերում, եւ ինչպես ներկայացված տեսաֆիլմից երեւաց, այդ արտադրամասերում անգամ ագռավներ էին թռչում: Սերտիֆիկատ ունեցող 17 ընկերություններից ոմանք իրենց արտադրանքը պատվիրում են հենց այդպիսի արտադրամասերից: Նրանցից շատերը հրաժարվեցին հայկական պատվիրակությանը ներկայացնել իրենց արտադրությունը: Միայն 4 ընկերություններ, որոնք արտադրում են Հնդկաստանում թողարկվող մսի 85 տոկոսը, առաջարկեցին մեր մասնագետներին լինել տեղում եւ ծանոթանալ արտադրության ողջ գործընթացին: Այս ընկերություններում, Աշոտ Վահանյանի հավաստմամբ, արտադրական գործընթացը ավտոմատացված էր, հիգիենիկ պայմանները պահանջվող մակարդակի էին, ունենին սեփական սպանդանոցներ եւ համապատասխանում էին պահանջվող մյուս բոլոր չափանիշներին:

«Փաստորեն, մեր գործարարները մսաթմերքը գնում են ոչ թե ամբողջ մսի 85 տոկոս արտադրող այլ ձեռնարկություններից, այլ 15 տոկոս կազմող անորակներից», ասաց վարչապետը, ավելացնելով, որ ներմուծող 15 հայկական կազմակերպություններին պետք է հայտնել, որ այդ ձեռնարկություններից միս ներմուծելու դեպքում լուրջ խնդիրներ կունենան:

Առողջապահության նախարար **Հարություն Քուշկյանն** առաջարկեց նաեւ, որ մեր մասնագետները տեղում ստուգեն Հայաստան առաքվող մսի որակը: Աշոտ Վահանյանը հայտնեց, որ Վրաստանն այդպես է վարվում, եւ որ երկրի մասնագետը ներկա է լինում ամբողջ գործընթացին ու հաստատում Վրաստան առաքվող մսի որակը: Դա էլ ստուգվում է երկրի սահմանին:

Ամփոփելով՝ վարչապետ Տիգրան Սարգսյանն ասաց, որ բացառությամբ 4 կազմակերպությունների, արգելվելու է հնդկական այլ կազմակերպություններից մսի ներմուծումը Հայաստան: Եթե այլ կազմակերպություններ կցանկանան միանալ այդ ցանկին, ապա պետք է ներկայացնեն իրենց արտադրության գործընթացը հայ մասնագետներին: Վարչապետն անհրաժեշտ համարեց, որ պարբերաբար անսպասելի այցելություններ եւ տեղում Հայաստան առաքվող մսի որակի ստուգումներ կատարվեն նաեւ վերոնշյալ 4 ձեռնարկություններում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ֆինանսների փոխնախարար. «Տարվա վերջին տնտեսության անկումը կտատանվի 12-15 տոկոսի սահմաններում»

2009-ին Հայաստանի 16.3 տոկոս տնտեսական անկումը պայմանավորված է 2008-ի վերջին եռամսյակում կատարված վատ աշխատանքով: Այն ժամանակ իշխանությունները կանխատեսում էին տնտեսական աճ, մինչդեռ գրանցվեց մոտ 20 տոկոս անկում: Երեկ «Հայաքգ» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտնեց Կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրյանը: Նրա խոսքով, ներկա պայմաններում աճ են արձանագրում առեւտրի եւ սպասարկման ոլորտները, որը պայմանավորված է սվերով: Սակայն այդ ռեսուրսն էլ շուտով սպառելու է իրեն:

Ըստ Ասատրյանի՝ 2010-ին գյուղատնտեսությունը եւ արդյունաբերությունը կարող են աճ արձանագրել, սակայն սրանք լավատեսական կանխատեսումներ են: Լավագույն դեպքում, Հայաստանի տնտեսական անկումը մյուս տարի կկազմի 1.5 տոկոս:

Բագրատ Ասատրյանը կարծում է, որ Հայաստանի տնտեսության վրա որոշիչ ազդեցություն է ունենալու Ռուսաստանի տնտեսությունը, որից զգալիորեն կախվածություն ունի: Եթե Ռուսաստանը 2010-ին արձանագրի նվազագույնը 3 տոկոս աճ, միայն այդ դեպքում 2011-ին մեր տնտեսությունը կսկսի կայունանալ:

«Ներկայում ոչ մի հակաճգնաժամային ծրագիր չկա, իսկ կառավարության իրականացվող իբր ընդլայնողական քաղաքականությունն անհասկանալի է: Ստեղծված իրավիճակի պատճառն այն է, որ ժամանակին երկնիշ տնտեսական աճ էր արձանագրվում, հիմնվելով մասնավոր տրանսֆերտների ու միջազգային կազմակերպությունների վարկերի վրա: Դրա հետեւանքով ունենք հիվանդ տնտեսություն: Այժմ էլ ճգնաժամը հաղթահարելու համար վարկեր ենք վերցնում դրսից: Սացվում է, որ հիվանդությունը փորձում ենք բուժել հիվանդության պատճառով», ավելացրեց Բագրատ Ասատրյանը:

Հայաստանի ֆինանսների փոխնախարար Վարդան Արամյանը տնտեսական ճգնաժամի հետեւանքների մասին խոսելիս ասաց, որ 2009-ին Հայաստանը արձանագրել է 16.3 տոկոս տնտեսական անկում, ինչը պայմանավորված է շինարարության (53 տոկոս) եւ արդյունաբերության (11.3 տոկոս) անկմամբ:

Ըստ Արամյանի, նույն վիճակն է համաշխարհային տնտեսությունում. «Այսպիսի իրավիճակ չէր ակնկալվում ոչ Ռուսաստանում, ոչ համաշխարհային շուկայում: ԱՄՀ կանխատեսումներն այդ երկրների համար նույնպես փոխվել են բացասական առումով»: Ըստ փոխնախարարի, Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) Եվրոմիության համար մի քանի անգամ փոխել է իր կանխատեսումները: Եթե դեկտեմբերին ակնկալվում էր, որ ԵՄ-ում տնտեսությունը կաճի կես տոկոսով, ապա հետագայում դարձավ 0,5 տոկոսով անկում, հետո այդ ցուցանիշը փոխվեց 1,5-ի, 3,2-ի, 4,2-ի, իսկ հիմա արդեն 2009 թվականի համար ԵՄ-ում կանխատեսվում է 4,8 տոկոսի տնտեսական անկում:

«Այսինքն, մեր տնտեսական զարգացումները համահունչ են համաշխարհային տնտեսության զարգացումներին», ասաց նա:

Այս տարվա վերջում կարձանագրվի 12-15 տոկոս անկում: Կառավարությունը, Արամյանի կարծիքով, ընդլայնողական քաղաքականություն է իրականացնում, այսինքն՝ երբ մասնավոր սեկտորը տնտեսական վատ վիճակի պատճառով խուսափում է ներդրումներ անելուց, կառավարությունը դրա փոխարեն փող է ներարկում տնտեսության մեջ:

«Ինչքան շուտ տնտեսությունը կլանի այդ փողը, այնքան ավելի շուտ աճ կարձանագրվի», ասում է ֆինանսների փոխնախարարը:

Ազգային ժողովի ԲՀԿ-ական պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Վարդան Բոստանջյանը, խոսելով տնտեսական անկման մասին՝ նշեց, որ իր համար զարմանալի է եղել այն պարադոքսը, որ ճգնաժամը համառորեն թակում էր մեր դուռը, իսկ մենք ասում էինք, թե այն մեզ չի սպառնում:

Օրենսդիր մարմնի ներկայացուցիչը ներկա իրավիճակի մասին նշեց, որ ճգնաժամի առաջ ,աչքերը փակելու հետեւանք է ներկա իրավիճակը, երբ սխալված երկիրը դրսից սացված գումարները ներդնում է տնտեսության մեջ:

«Մի քիչ լավ թե մի քիչ վատ, կառավարությունը քայլեր կատարում է այս իրավիճակից դուրս գալու համար, ասում է Բոստանջյանն ու լավատեսություն հայտնում այն առումով, որ երկրի տնտեսությունը դրական միտումներ կարձանագրի 2010-ին:

Բոստանջյանի խոսքով, կա կապիտալի արտահոսք, որը նշանակում է, որ Հայաստանում չկա սեփականության իրավունքի պաշտպանության մշակույթ:

Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԲՈՂՈՔ

Երիտասարդները պնդում են, որ ակտիվիստին ներկայացրած մեղադրանքը կեղծ է

Արդեն մի քանի օր ինտերնետում հայտնի սոցիալական բոլոր ցանցերում երիտասարդները քննարկում եւ պարզում են «S.O.S. Թեղուտ» երիտասարդական կանաչ շարժման ակտիվիստ Մարիամ Սուխուդյանի պաշտպանության հարցը: Երեկ շուրջ 50 երիտասարդ հավաքվել էր ՀՀ ոստիկանության Էրեբունու քննչական բաժանմունքի մոտ, ուր Մարիամ Սուխուդյանը հարցաքննության էր հրավիրվել:

Մարիամ Սուխուդյանը կամավորական այն խմբի ղեկավարն էր, որը նախորդ տարի աշխատել էր Նուբարաշենի թիվ 11 գիշերօթիկ դպրոցում: Երիտասարդներն այդ ժամանակ ահազանգ էին հնչեցրել դպրոցի անմխիթար պայմանների, նաեւ ուսուցիչներից մեկի կողմից աշակերտների նկատմամբ սեռական ոտնձգությունների մասին:

Այս տարվա օգոստոսի 13-ին Մարիամ Սուխուդյանը ծանուցագիր էր ստացել՝ զրպարտության մեղադրանքով օգոստոսի 15-ին ցուցմունք տալու համար: Օգոստոսի 15-ին ոստիկանությունում նրան հայտնում են, որ մեղադրվում է մեկ այլ հոդվածով՝ սուտ մատնության համար: Այս հոդվածով նախատեսված է առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկում:

Մարիամ Սուխուդյանի պաշտպանության համար հավաքված երիտասարդները համոզված են, որ մեղադրանքները կեղծ են եւ փորձ է արվում լռեցնելու խնդիրները բարձրաձայնող երիտասարդներին: «Մարիամին մեղադրում են, թե իբր շահադիտական նպատակներով դպրոցի տնօրենի դեմ դավեր է նյութում: Թե իբր սեռական ոտնձգությունների մասին աշակերտների պատմությունները, որոնք Մարիամը նկարահանել էր, բեմադրված են», ասաց բողոքի մասնակից Հրայր Սավզյանը:

Երիտասարդները այստեղ էին եկել «Բարի գործն անպատիժ չի մնում», «Հայաստանում հետապնդում են ահազանգ բարձրացնողներին», «Հետաքննություն+փաստեր = արդար պատիժ» պաստառներով: Երբ երիտասարդները հավաքվեցին ոստիկանության շենքի դիմաց, ոստիկանները մոտեցան ակցիայի մասնակիցներին եւ պահանջեցին ճանապարհ բացել, հեռու կանգնել՝ պատճառաբանելով, թե խանգարում են իրենց աշխատանքին եւ ճանապարհ չկա մուտք ու ելք անելու համար: Երիտասարդ ակտիվիստներն էլ նշում էին, թե իրենք որեւէ մեկին չեն խանգարում, իսկ ճանապարհը փակ չէ:

«Մենք այստեղից չենք հեռանալու եւ պայքարելու ենք մինչեւ վերջ: Մարիամին լռեցնելու փորձ է արվում: Մենք չենք կարող դա թույլ տալ», նշեց Հրայր Սավզյանը:

Մարիամ Սուխուդյանը, ընկերների հավաստմամբ, ոստիկանություն էր եկել հրաժարվելու ցուցմունքներ տալուց՝ մինչեւ գործի ամբողջական ներկայացումը: Ոստիկանության բաժանմունքից Մարիամ Սուխուդյանը դուրս եկավ շուրջ 2.5 ժամ այնտեղ անցկացնելուց հետո: Ինչպես եւ հայտարարվել էր, Մարիամը հրաժարվել էր ցուցմունքներ տալուց, փոխարենը նրա փաստաբանը պահանջել էր ներկայացնել գործին առնչվող որոշակի փաստաթղթեր: Ոստիկանությունում անցկացրած ժամերի ընթացքում Մարիամն ի նշան բողոքի բերանը կապել էր կտորով եւ հրաժարվել խոսելուց:

ԱՐԵՎԻԿ ԲԱԳԱԼՅԱՆ

Մեկնարկեց «Արի տուն» ծրագրի երրորդ փուլը

Օրեր առաջ աշխարհի 7 երկրներից ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնած «Արի տուն» ծրագրի 2-րդ փուլին Հայաստան ժամանած շուրջ 70 երիտասարդներն ու աղջիկները, այցելելով մայր հայրենիքի տեսարժան ու պատմական վայրերը, անջնջելի տպավորություններով հրաժեշտի երեկոյի հավաքվեցին Երեւանի Սիրահարների այգում: Այնտեղ նրանց սպասում էին ՀՀ սփյուռքի փոխնախարար **Ստեփան Պետրոսյանը**, քաղաքապետ **Գագիկ Բեգլարյանը** եւ երեւանցիները: Ողջունելով հյուրերին՝ քաղաքապետը մեծապես կարեւորեց այս ծրագիրը հայրենադարձության եւ հայապահպանության գործում: Փոխնախարար Պետրոսյանն իր երախտագիտության խոսքը հայտնեց ծրագրին աջակցող բոլոր կազմակերպություններին, ղեկավարներին եւ ծրագրին արձագանքած սփյուռքահայ երիտասարդներին, որոնց համարեց սփյուռքի նախարարության դեսպաններ: Մինչեւ ուշ գիշեր ծրագրի մասնակիցները ուրախացան, երգեցին, պարեցին եւ ըմբոշխնեցին հայրենի բնության հարուստ պտուղները խոստանալով հաջորդ տարի կրկին գալ:

Իսկ երեկ մեկնարկեց «Արի տուն» ծրագրի երրորդ փուլը, որի շուրջ 60 մասնակիցներ Հայաստան են ժամանել Իրանից, Վրաստանից, Ռուսաստանից, Գերմանիայից, ԱՄՆ-ից եւ Ֆրանսիայից: Նրանք արդեն հաստատել են այցելել Էջմիածին եւ Սարդարապատ:

Երեկոյան ծրագրի մասնակիցներին եւ հյուրընկալող ընտանիքների անդամներին ընդունել են ՀՀ սփյուռքի փոխնախարար Ստեփան Պետրոսյանը եւ աշխատակազմի ղեկավար **Արտակ Զաքարյանը**: Մինչեւ օգոստոսի 31-ը ընթացող «Արի տուն» ծրագրի մանրամասներն է ներկայացրել նախարարության համահայկական ծրագրերի վարչության պետ **Ժենյա Ազիզյանը** ու մասնակիցներին նվիրել ծրագրի տարբերանշանով պայուսակներ, վերնաշապիկներ, գլխարկներ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

AZG NEW 4.QXD 8/19/2009 9:23 PM Page 1

Գնա՞լ, թե՞ չգնալ Թուրքիա հանգստանալու

Արձակուրդային սեզոնը շարունակվում է, եւ հարցը, թե որտե՞ղ անցկացնել հանգիստը, շատերն են իրենց տալիս: Բնականաբար, բոլորն էլ ցանկանում են ընտրել լավագույն տարբերակը՝ հնարավորինս բարձր սպասարկման որակ՝ հնարավորինս ցածր արժեքով: Հայաստանո՞ւմ հանգստանալ, թե՞ դրսում, եթե դրսում, ապա Աջարիայում, Թուրքիայում, Բուլղարիայում, Կիպրոսում, թե՞ մեկ այլ տեղ: Ահա այս հարցերը զուտ անձնականից վերածվում են պետության համար տնտեսական կարեւոր նշանակություն ունեցող հարցերի: Իսկ Թուրքիայում մեր հայրենակիցների հանգստանալ-չհանգստանալու հարցն արդեն անձնական կամ տնտեսական հարցից դարձել է նաեւ բարոյական-քաղաքական:

Թուրքիայում հանգստացողների համար ամենակարեւոր հանգամանքները ծովն ու հյուրանոցային ցածր գներն են: Այսինքն, եթե հարցը դիտարկենք տնտեսական տեսանկյունից, ապա Հայաստանի հյուրանոցները, հանգստյան տները պետք է ի վերջո կարողանան մրցակցել Թուրքիայի տուրիստական հանգրվանների հետ: Չնայած այս տեսակետը բազմիցս է արտահայտվել, բայց գնային փոփոխությունները նկատելի են միայն մեր մի քանի առավել հայտնի հյուրանոցների եւ հանգստյան տների մոտ: Ճկուն գնային քաղաքականությունից մեր զբոսաշրջային հանգրվանների գերակշիռ մասը դեռ հեռու է: Նրանց եւ զբոսաշրջության ոլորտի պետական պատասխանատուների արդարացումները, թե ծովային հանգիստն ավելի էժան է, թե մեզ մոտ միայն 2-3 ամիս է զբոսաշրջային սեզոնը, իսկ Թուրքիայում շուրջտարյա, որեւէ քննադատության չեն դիմանում:

Նախ՝ ծովային հանգստի ավելի էժան լինելը ոչ թե արդարացում պետք է լինի Հայաստանում հանգիստն ավելի թանկ դարձնելու համար, այլ ընդհակառակը՝ պետք է ստիպի հավելյալ ծառայություններ առաջարկել ավելի բարձր սպասարկմամբ եւ ցածր գնով: Դա կնպաստի նաեւ զբոսաշրջային սեզոնն ավելի երկարացնելուն: Մինչդեռ, մեզանում դեռ գերիշխում է գավառական բիզնես մտածելակերպը՝ 2-3 ամսում բարձր գներ առաջարկելով, ստանալ ամբողջ տարվա շահույթը: Կարելի է պատկերացնել, թե ինչ ողբալի վիճակում կհայտնվի մեր այս բիզնեսը, եթե հայ-թուրքական սահմանը բացվի եւ Թուրքիայում հանգստանալու ծախսերն ավելի նվազեն:

Ինչ մնում է Թուրքիայում հայերիս հանգիստն անցկացնելու հարցի բարոյական եւ քաղաքական տեսանկյուններին... Յուրաքանչյուր հայ, որ ցանկանում է հանգստանալ Թուրքիայում, մտքում պետք է հիշի, որ այդ երկրի ամեն մի թիզը ողողված է մեր հայրենակիցների արյամբ: (Ասեմ, որ ցեղասպանության զոհ նախնիներ եւ անգամ հեռավոր ազգականներ չունեմ- Ա. Մ.): Բարոյական առումով բացարձակապես անընդունելի է մեր այն հայրենակիցների մոտեցումը, որ հանուն հարյուր կամ երկու հարյուր դոլարի խնայողության, կարող են մոռանալ այդ հանգամանքը: Այո՛, պետությունը չի կարող եւ չպետք է արգելի որեւէ մեկին իր հանգիստն անցկացնելու այնտեղ, որտեղ ցանկանում է: Դա յուրաքանչյուրի իրավունքն է: Սակայն պետական քաղաքականության մեծ բացն է, որ կան հայեր եւ ոչ քիչ, որոնք հանգստանում են այն երկրում, որտեղ իրենց նախնիները հարյուրամյակներ շարունակ ենթարկվել են դաժան հալածանքների եւ 1915-ին՝ ցեղասպանության:

Թուրքիայում հանգստանալ սիրող մեր հայրենակիցները պետք է գիտակցեն, որ դրանով ոչ միայն, մեղմ ասած, անհարգալից վերաբերմունք են ցուցաբերում մեր միլիոնավոր զոհերի հիշատակի հանդեպ, այլեւ նպաստում են մեր երկրի նկատմամբ առ այսօր թշնամաբար տրամադրված պետության հզորացմանը: Առավել դիպուկ դա ձեւակերպված էր Դաշնակցության մի ղեկավարում՝ Թուրքիայում հանգստացող հայերը զինում են թուրքական բանակը:

Անշուշտ, վերոնշյալ մոտեցումներին առարկողներ կան: Իրենց լիբերալ համարող, իսկ իրականում ազգային-պետական շահերի վրա թքած ունեցող քաղաքական ուժերն ու անձինք մտքում այն կարծիքն են հայտնում, որ շուկայական տնտեսության պարագայում բնականոն է Թուրքիայում հայերի հանգստանալն ու ընդհանրապես այդ երկրի հետ տնտեսական հարաբերությունների հաստատումը: Ընդ որում, նրանք մտքում «մոռանում» են, որ նման հարաբերությունները պետք է երկկողմանի լինեն եւ մի շարք այլ «մանրուքներ»: Մասնավորապես, որ սահմանը փակելու՝ շուկայական տնտեսությանն ու բնականոն հարաբերություններին հակասող քայլը կատարել է Թուրքիան, այլ ոչ թե Հայաստանը: Թուրքիան է արգելում հայկական համարանիշներով բեռնատարների փոխադրումներն իր երկրի տարածքում անգամ երրորդ երկրի սահմանից, իսկ Հայաստանում թուրքական բեռնատարները անարգել երթեւեկում են եւ բեռներ տեղափոխում: Չնայած մեր հայրենակիցներն առանց որեւէ խոչընդոտի հանգստանում են Թուրքիայում, բայց Հայաստանից Թուրքիա այս տարի էլեկտրաէներգիա արտահանելու պայմանավորվածությունը թուրքական կողմը չի կատարում: Եվ ի վերջո, հենց Հայաստանը, չնայած ցեղասպանության դառը հիշողությանը, հայտարարեց առանց նախադայմանների Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու մասին, որը, փաստորեն, չընդունեց վերջինս: Մեր թուրքասեր «գործիչներն» ու «քաղաքագետները» չգիտե՞ն այս ամենի մասին:

Ամփոփելով, մեկ անգամ եւս կցանկայինք մեր հայրենակիցներին խնդրել, հորդորել հրաժարվել Թուրքիայում հանգստանալուց, չմոռանալ մեր ժողովրդի անցյալն ու չվանգել մեր երկրի ներկան ու ապագան: Եթե Հայաստանում հանգստի պայմաններն ու գները չեն համապատասխանում ձեր պահանջներին, ճաշակին, գրպանին, ապա հանգիստն անցկացրեք որեւէ այլ երկրում, բայց ոչ երբեք Թուրքիայում: Առնվազն գոնե այնքան ժամանակ, քանի դեռ այդ երկիրը մնում է Հայաստանի նկատմամբ թշնամաբար տրամադրված, քանի դեռ հրաժարվում է որեւէ ընդառաջ քայլ կատարել տնտեսական փոխշահավետ հարաբերությունների հաստատման, քաղաքական խնդիրների արդար կարգավորման ուղղությամբ, քանի դեռ չի ճանաչում եւ ներողամտություն հայցում միլիոնավոր հայերի բնաջնջման համար:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Արեւորդի» էկոակումբի սաների ամառային դպրոցը Ծաղկաձորում

Գրողների՝ Ծաղկաձորի ստեղծագործական տան բակում մի քանի մսավորականներ բնության, մասնավորապես անտառների նորացման ու դրա հետեւանքների մասին մտահոգ խոսակցություն էին տանում, նաեւ խոսք գնաց այն մասին, որ անգամ գյուղաբնակ երեխան է հեռացել բնաշխարհից: Այդ նույն ընթացքում փչ հեռվում «Արեւորդի» էկոակումբի պատանիները բացօթյա դասընթացներ էին անցկացնում: Այս ծրագիրն իրականացնում է Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը, որ գործում է 2002 թվականից եւ այս ընթացքում Երեւանում, Հայաստանի գրեթե բոլոր մարզերում եւ ԼՂ-ում ստեղծել է բնապահպանական ակումբներ՝ համագործակցելով տեղական համայնքային իշխանությունների եւ մասնագետների հետ: Իմ զրույցը հիմնադրամի մամուլի ծառայության պատասխանատու **Անի Եղիազարյանի** հետ ինչ-որ չափով փոխեց քիչ առաջ ունեցած մեր զրույցի պատկերացումները: Եթե Հայաստանի տարբեր մարզկենտրոններում ու գյուղերում, Արցախում գործող բնապահպանական ակումբներ հաճախում են 35-40-ական երեխա, որոնք ոչ միայն մոտիկից ծանոթանում, ճանաչում են բնաշխարհն ու նրա խնդիրները, այլեւ գործուն միջամտություն են ունենում՝ շաս ու շաս հարցեր ի հայս բերելու եւ դրանք հրապարակայնացնելու, ուրեմն ամեն ինչ դեռ վանգված չէ:

Այս ակումբներն ուսուցողական բնույթ ունեն, այստեղ երեխաները շաբաթական 3-4 անգամ բնապահպանության, լրագրության, լուսանկարչության (ֆոտովիդեո), անգլերենի, համակարգչային եւ այլ դասընթացների են մասնակցում եւ տարվա ամբողջական դասընթացի ավարտին սանում սերտիֆիկատ: Տարեվերջին գործում է ամառային դպրոցը, որին մասնակցում են բոլոր էկոակումբներից թեստերի միջոցով ընտրված աշակերտները: Երրորդ տարին է՝ գործում է ամառային դպրոցը. առաջինը Ծաղկաձորում էր, երկրորդը՝ Դիլիջանում, այս տարի դարձյալ Ծաղկաձորում՝ գրողների ստեղծագործական տանը, որտեղ 54 երեխա մասնակցում էր տարբեր դասընթացների, նաեւ զբաղվում տարվա ընթացքում նկարահանած ֆիլմերի մոնտաժով, բնապահպանական թեմաներով (Ծաղկաձորի նոր շինարարություններին, կենսաբազմազանությանը, անտառային ռեսուրսներին, ցեմենտի գործարանին վերաբերող) նոր ֆիլմեր նկարում:

Նրանք սովորում էին արեւային էներգիայի կլանող սարք պատրաստելու պարզ տեխնոլոգիան՝ օգտագործելով գարեջրի թիթեղյա տարան: Հետաքրքրական էին թղթի արտադրության նրանց փորձերը: Թղթի վերամշակման դասերի տեսական գիտելիքը գործնական կիրառության մեջ էր դրվում: Անպետք, ավելորդ թուղթը հավաքվում, մանրացվում, լցվում է ջրի մեջ, էլեկտրական հարիչով ստացված համասեռ զանգվածը արեւի տակ ցանցերի վրա չորացվելուց հետո նյութը նոր որակ է ձեռք բերում: Երեխաները սա օգտագործում են բացիկների եւ նման այլ անհրաժեշտությունների համար: «Կանաչ աստվածաբանության» դասաժամերը բնության եւ մարդու միջեւ հոգեւոր կապերն են բացահայտում, երեխաներին, ըստ Աստվածաշնչի, բնության գաղտնիքները կարդալուն օգնում էր Սեւանի Այրիվանքի հոգեւորական տեր Մինասը:

Ակտիվ էին ազգային պարի դասընթացները եւ դրանց կատարումները՝ ամեն երեկո հանգստյան տան նախասրահում պարային մի հետաքրքրական ծրագիր էր ներկայացվում՝ գլխավորությամբ ազգագրական պարի համույթի ղեկավար Գագիկ Գինոսյանի:

Ծրագրի մի կարեւոր մաս էին կազմում կինոդասընթացները, բնապահպանական թեմաներով ֆիլմերի նկարահանումները: Առ այսօր մեծ աշխատանքներ են կատարվել այս ուղղությամբ, տասնյակից ավելի ֆիլմերը բնապահպանական տարբեր խնդիրներ են վեր հանում. դրանք ուշագրավ են ոչ այնքան պրոֆեսիոնալիզմի, որքան շրջակա միջավայրի նկատմամբ նրանց առավել ուշադրության, հետաքրքրության, մասնավորապես շատերիս անհայտ, իրենց տեղական բնակավայրում առկա բնապահպանական խնդիրների արծարծման տեսանկյունից: Միայն այս տարի երեխաների 10-ից ավելի պատրաստած ֆիլմեր շաս կարեւոր երեւույթների են անդրադառնում: Նորադուզի էկոակումբի սաներն իրենց ֆիլմում տեղանքի գեսի վիճակի մասին են պատմում: Հովիվները վկայում են, որ գեսի ակունքի զուլալ, պարզ ջուրը, գյուղի միջով անցնելով, աղտոտվում եւ Սեւան լցվում է պղտորված ու կեղտոտ վիճակով: Մեկ այլ ֆիլմ ներկայացնում է Սեւանի խնդիրները ձկնորսի եւ տեղաբնակ մի երեխայի զրույցի միջոցով: Եղեգնաձորի պատանի բնապահպանները ներկայացնում են Նորավանքի չորացած շրջակայքը՝ գեսի հունի փոփոխության պատճառով: Գյումրին ներկայացվում է քաղաքի սնորգետնյա ջրային համակարգի քարիզներով, որոնք ի սկզբանե ծառայել են որպես մաքուր ջրի ռեսուրս, այժմ էլ տեղի գարեջրի գործարանը օգտվում է այդ քարիզներից: Սակայն բնակիչների անգիտակից ու անտեղյակ վերաբերմունքն այն փչացրել է՝ կոյուղու ջրերի հետ խառնելով, իսկ սա նաեւ սեյսմակայունության հետ կապված լուրջ խնդիրներ կարող է առաջացնել Գյումրիում:

Ծրագրի ղեկավար ռեժիսոր Ռուբեն Խաչատրյանի՝ առաջին տարիներից նկարահանած 30 մասանոց ֆիլմաշարը պատմում է վայրի բնության, անհետացող կենդանիների, բուսականության, բնաշխարհի ներկա վիճակի մասին: Այս ֆիլմերը կարեւոր մի նպատակ ունեն՝ փոքրերի միջոցով մեծերին տեղեկություններ հասցնել՝ հոգեբանորեն փորձված եւ արդյունավետ մեթոդով: Երեխաների մտածողության վրա բավական ներգործություն էին ունենում նաեւ երեկոյան կազմակերպված կինոդիսուտներն ու դրանց քննարկումները: «Պլաստիկի մասին ֆիլմը պատմում էր վառվելուց կամ շտրելուց հետո այդ նյութի վտանգավոր հետեւանքների մասին, չքայքայվող այդ աղբը վառվելուց հետո էլ գազեր է արտանետում եւ աղտոտում մթնոլորտը: Գուցե այս ֆիլմից հետո մարդը հաջորդ անգամ խանութ գնալիս թղթե տոպրակո՞վ առեւտուր անի», ասում է Անին: Իսկ Ուրցաձորի էկոակումբի ֆիլմը որոշ տեղաբնակների անհոգի մի վերաբերմունքի մասին է: Սեփական զվարճանքին, քմայքին հագուրդ տալու համար կան բնակիչներ, որ սիրում են պահել վայրի գազանների ձագեր (արծիվ, գայլ եւ այլն): Երբ նրանք մեծանում են, եւ դժվարանում է խնամքը կամ խանգարում են իրենց, մարդիկ կենդանիներին վաճառում կամ սպանում են: Բնապահպանական նմանաբնույթ հարցեր պատանիները արծարծում են նաեւ իրենց հոդվածներում՝ ոլորտի մասնագետների հետ խորհրդակցելով, ստացված տեղեկությունները նրանց հետ ճշգրտելով: Հոդվածները տպագրվում են մանկապատանեկան մամուլում՝ «Կանչ», «Լոլո», «Աղբյուր», «Մուլտիշոկ»:

Հիմնադրամի բազմաբնույթ միջոցառումները՝ բնապահպանական ուղղվածության, աղբահանում կլինի, ծառատունկ եւ դրա հետեւողական խնամք, մշակութային վայրերի շրջակայքի խնամք, Նորադուզի խաչքարերի մաքրում թե ծաղկի սերմերի բաժանում, հանրօգուտ եւ դաստիարակչական նշանակություն ունեն:

«Արեւորդի» էկոակումբների դասընթացները նաեւ մասնագիտական կողմնորոշումների վրա ունենում են ուղղորդող դեր: Նրանցից մի քանիսը տարբեր բուհերում ընտրել են բնապահպանություն-քիմիա մասնագիտությունը, թատերական ինստիտուտի օպերատորական բաժինը: Ծրագրի նպատակը, սակայն, ինչպես նշեց Անի Եղիազարյանը, դրա հիմնական գաղափարը կենսակերպ դարձնելն է, պարել որպես բնապահպաններ:

Հիմնադրամը այս տարվա հոկտեմբերի 24-29-ը կանցկացնի իր երկրորդ փառատոնը (առաջինը 2007-ի պարիլին է եղել), ընդգրկելով տարբեր ծրագրեր, ի թիվս որոնց՝ նաեւ ֆիլմերի ցուցադրություն («Մոսկվա», «Նաիրի» կինոթատրոններում, «Նարեկացի» արվեստի միությունում), կմասնակցեն ֆիլմեր ինչպես արտերկրից, նաեւ «Արեւորդիների» նկարահանածներից:

Բնապահպանական այս ծրագիրը լայն հանրությանը ծանոթացնելու համար, կարծում ենք, անհրաժեշտ է զանգվածային լրատվամիջոցների աջակցությունը: «Արեւորդի» հեռուստածրագրի իրականացմամբ բնապահպանական այս կրթությունը առավել լայն տարածում կստանա, որից կշահեն բնությունն ու մարդը: Հիմնադրամն իր ծրագրերը կյանքի է կոչում «Վիվասել» ընկերության հովանավորությամբ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

AZG NEW 5.QXD 8/19/2009 9:23 PM Page 1

Բացահայտելով օսմանյան արխիվներում գտնվող ցեղասպանության փաստաթղթերը

«Կալիֆոռնիա կուրիեր» թերթին վերջերս հաջողվել է ձեռք բերել որոշ փաստաթղթեր օսմանյան արխիվներից: Ստորև թարգմանաբար ներկայացվող՝ այդ թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանի հոդվածը մանրամասնություններ է պարունակում այդ մասին:

Ճանոթ փաստ է, որ Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր կամ ամբողջովին են ոչնչացված, կամ էլ խստորեն թաքցված՝ թուրքական կառավարության կողմից: Վճռականորեն տրամադրված գիտաշխատողներ, այդուհանդերձ, դեռեւս կարող են օսմանյան արխիվներում հայտնաբերել նյութեր, որոնք լույս են սփռում այդ ողբերգական ժամանակաշրջանի կարեւոր իրադարձությունների եւ անձնավորությունների վրա:

Վերջին տարիներին Թուրքիայի կառավարությունը, իրեն վերապահելով ընտրության իրավունքը, հրապարակել է օսմանյան ամենաանվնաս փաստաթղթերից մի քանիսը՝ հակազդելու համար այն քննադատություններին, որ թաքցնում է փաստաթղթեր, որոնցում ինքը մեղադրվում է հայերի ցեղասպանության մեջ: Միլիոնավոր այլ փաստաթղթեր, սակայն, դեռեւս անհասանելի են մնում համընդհանուր հանրությանը, որովհետեւ գիտաշխատողները պարտավոր են Ստամբուլ մեկնել եւ իրենց հետաքրքրող որոշակի փաստաթուղթը պահանջել՝ նշելով թղթապանակի համարը եւ վճարելով համապատասխան գումար: Եվ նույնիսկ փաստաթղթերն ստանալուց հետո շատ քչերին է հաջողվում (Թուրքիայի ներսում թե դրսում) ընթերցել եւ հասկանալ դրանք, քանի որ գրված են օսմանյան թուրքերենով եւ դժվար է վերծանել արաբատառ գրությունը:

«Կալիֆոռնիա կուրիեր» շաբաթաթերթին վերջերս հաջողվեց օսմանյան արխիվներից ձեռք բերել կարեւոր փաստաթղթեր դաշնակցական հայտնի հասարակական գործիչ է. Ակնունու ողբերգական ճակատագրի մասին: Ակնունին ծնվել է Մեղրիում (Հայաստան) մոտավորապես 1865-ին եւ սովորել Ժնեւի համալսարանում: Ակտիվ մասնակցություն է ունեցել Վրաստանում, Ռուսաստանում եւ Ֆրանսիայում բռնկված հայկական քաղաքական շարժումներին: 1904-ին Փարիզում գտնվելով՝ Ակնունին օժանդակել է սուլթան Աբդուլ Համիդին գահընկեց անելու երիտթուրքերի կուսակցության ջանքերին:

Հետագայում Կոստանդնուպոլիս (Ստամբուլ) վերադառնալով՝ նա ակտիվ մասնակցություն է ունեցել երիտթուրքերի 1908-ի հեղափոխությանը: Այնուհետեւ շրջագայել է Եվրոպայի եւ Մ. Նահանգների հայկական համայնքներում: Սակայն հարյուրավոր այլ ակնառու հայերի թվում նա եւս 1915-ի ապրիլի 24-ին Ստամբուլում ձերբակալվել է եւ սպանվել:

Ձերբակալությունից առաջ Ակնունին արտածվիկ մի հոդված է հրատարակել Ֆրեզնոյի հայալեզու «Ասպարէզ» թերթի 1915 թվի ապրիլի 16-ի համարում, որտեղ ներկայացրել է իրենց համապատասխան երկրների (Ռուսաստան եւ Օսմանյան կայսրություն) բանակներում ծառայող եւ իրար դեմ կռվող հայ զինվորների մահոգիչ տեսարանները: Նա կոչ է արել ամերիկահայերին՝ օգնության ձեռք մեկնել իրենց տառապող հայրենակիցներին:

Զարմանալի չէ, որ օսմանյան կառավարությունը հետեւել է Ակնունու ամեն մի քայլին: Դրա վառ վկայությունն է այդ հոդվածի թուրքերեն թարգմանությունը, որ մենք գտանք մեր ձեռքն անցած փաստաթղթերում: Թարգմանիչն Արթին անունով մի հայ պաշտոնյա էր, որն աշխատել էր թուրքական կառավարությունում՝ որպես «հայերեն թերթերի գրաքննիչ»:

Արթինը հետեւյալ բացահայտող տողերն էր կցել թարգմանությանը: «Թարգմանված այս հոդվածը պատկանում է Է. Ակնունուն: Նա Դաշնակցական կուսակցության անդամ է: Իսկական անունը Խաչատուր Մալումյան է: Ռուսաստանի քաղաքացի է: Ստամբուլ է եկել պատերազմի ժամանակ եւ մինչեւ օրս ոչ մի ափաստանք չի կատարել, բացի իր կուսակցության օգտին քարոզչությունից: Այստեղ բնակվելու ժամանակահատվածում մեկ կամ երկու անգամ Եվրոպա է այցելել: Նա տարագրվածների վերջին խմբի մեջ է եղել»:

Գրիգորիս եպիսկոպոս Բալաֆյանը, որը 1915-ի ապրիլի 24-ին թուրքական կառավարության կողմից շուրջկալի ենթարկվածների թվում է եղել, իր «Հայ Գողգոթա» երկհատոր կոթողային հիշատակարանում նկարագրել է Ակնունու ձերբակալման տարածվիկ տեսարանը: «Երբ թուրք ոստիկանները եկան նրան ձերբակալելու, Ակնունին ցնցված հարցրեց նրանց. «Թալեաթը գիտի՞ այս մասին»: Նա կատարելապես ապշել էր, երբ ոստիկանները նրա ձերբակալման լիազորագրի վրա ցույց են տվել Թալեաթի ստորագրությունը: «Ես հենց նոր ճաշում էի Թալեաթի հետ: Ինչպե՞ս է, որ նա ոչինչ չի ասել ինձ այդ մասին»,- ասել է Ակնունին:

Նա փարացած է եղել, որովհետեւ չի կարողացել հավատալ, որ Թալեաթը կդավաճանի իրեն այն բանից հետո, երբ ինքը փրկել էր նրա կյանքը 1908-ի երիտթուրքերի հեղափոխության ժամանակ՝ թաքցնելով նրան իր սեփական տանը եւ այդպիսով վտանգելով իր անձը:

Ըստ Բալաֆյանի, երբ Ակնունին ի վերջո գիտակցել է, որ իրեն առաջնորդում են դեպի իր մահը, դառնալով իր բանտարկյալ ընկերներին՝ ասել է. «Չեմ ափսոսում, որ մահանալու եմ, քանի որ գիտեմ՝ մահն անխուսափելի է: Իմ միակ ափսոսանքն այն է, որ այդ թուրք չարագործները խաբեցին մեզ»: Բալաֆյանն իր հերթին խորին ափսոսանք է արտահայտել, որ թուրքերին վստահող հայերը շատ ուշ են գիտակցել իրենց սխալը, երբ արդեն ճանապարհ էին ընկել դեպի մահ:

Օսմանյան արխիվներից ձեռք բերված մի քանի նոր փաստաթղթեր առաջին անգամ երեւան են հանում, որ Իսպանիայի թագավորը քանիցս փորձել է ազատել Ակնունուն, Դանիել Վարուժանին, Սիամանթոյին եւ այլ ակնառու հայերի:

Պարզ չէ սակայն, թե ինչն է դրդել Իսպանիայի թագավորին ներքաշվելու նման մարդասիրական առաքելության մեջ: 1916-ի ապրիլի 24-ին եւ մայիսի 10-ին գրված զույգ նամակներում՝ ուղղված Թուրքիայի արտգործնախարար Հալիլ Բեյին, Իսպանիայի դեսպան Խուլիան դել Առոյոն նշում է, որ Նորին մեծություն Ալֆոնսո XIII թագավորը սուլթան Մեհմեդ V-ին խնդրում է խնայել վերոհիշյալ հայ բանտարկյալների կյանքը: Իսպանիայի թագավորը տեղյակ չէր, որ այդ հայերին վաղուց արդեն ապրողների մեջ փնտրելն անիմաստ էր:

Վերջերս ձեռք բերված այլ խիստ գաղտնի հաղորդագրություններ՝ գրված թուրք պաշտոնյաների կողմից, ցույց են տալիս, որ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան շինծու մի պատմություն է հորինել վերոնշյալ հայերի ճակատագրի մասին: Նա արտգործնախարար Հալիլ Բեյին ուղղված 1916 թվի հուլիսի 25-ի նամակում խնդրում է Իսպանիայի դեսպանին հայտնել, որ խնդրո առարկա հայերը Դիարբեքիրի ռազմական ատյանի իրենց ճանապարհին փախել էին Ռուսաստան:

Թալեաթը դրանով թաքցնում էր իր իսկ գործած ոճրագործությունները: Թուրք ղեկավար պաշտոնյաների այս նորահայտ հաղորդագրությունները մի անգամ եւս ապացուցում են, որ հայերի ցեղասպանությունը ծրագրված էր եւ իրականացված կենտրոնական կառավարության կողմից:

Ներքին գործերի նախարար Թալեաթը հրամայել էր տեղահանել եւ սպանել հայերին: Նա նաեւ մանրամասն զեկուցագրեր էր պահանջում նրանց տեղաշարժերի եւ վիճակի վերաբերյալ:

Որոշ դեպքերում Թալեաթը ինքն էր նամակ գրում՝ հետաքրքրվելու համար որոշ ականավոր հայերի ճակատագրերով:

Հակառակ փաստաթղթերի մանրակրկիտ զտումներին՝ Հայոց ցեղասպանության կազմակերպման եւ իրականացման մեջ թուրքական մեղսակցության բազմաթիվ ապացույցներ դեռեւս գտնվում են օսմանյան արխիվներում:

ԱԴՐԲԵՋԱՆ

Բանտում մահացել է «Թոլշի Սադո» թերթի գլխավոր խմբագիրը

Ըստ «Ազատություն» ռադիոկայանի, Ադրբեջանի բանտում մահացել է լրագրող, «Թոլշի Սադո» («Թալիշների ձայն») թերթի գլխավոր խմբագիր Նովրուզալի Մամադովը:

68-ամյա Մամադովը դատապարտվել էր 10 տարվա ազատազրկման՝ պետական դավաճանության մեղադրանքով: Նա, մասնավորապես, մեղադրվում էր Իրանի հատուկ ծառայությունների հետ համագործակցելու մեջ: Խմբագրին մեղադրանք էր ներկայացվել նաեւ ազգային, ռասայական, կրոնական թշնամանք սերմանելու համար:

Թերթի խմբագիր լինելուց բացի, Մամադովը թալիշների մշակութային կենտրոնի ղեկավարն էր, նախկինում ղեկավարել էր նաեւ Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի լեզվաբանության բաժինը: «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայության թղթակիցը հաղորդում է, որ Մամեդովը տառապում էր մի շարք հիվանդություններից, այդ թվում՝ ուրացային: Հուլիսի 28-ին խմբագրին տեղափոխել էին մեկուսարանի հիվանդանոց: Նովրուզալի Մամադովը ձերբակալվել էր 2007-ի փետրվարին: Անցյալ տարի դատարանը 68-ամյա Նովրուզալի Մամադովին դատապարտեց 10 տարվա ազատազրկման: Այս տարվա ապրիլին Եվրոխորհրդի խորհրդարանական վեհաժողովում Ադրբեջանի հարցով համազեկուցողներ Անդրես Հերկելը (Էստոնիա) ու Եվգենիա Ձիվկովան (Բուլղարիա) այցելել էին Ադրբեջան: Նրանք մեկուսարանում հանդիպել էին նաեւ Նովրուզալի Մամադովին: Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները, արեւմտյան դիվանագետները բազմիցս Ադրբեջանի իշխանություններին հորդորել են ազատ արձակել ծանր հիվանդություններով տառապող մարդուն: Ադրբեջանի իրավապաշտպանները պնդում են, որ Մամադովի դեմ գործը սարքված է: Նովրուզալի Մամադովին նրանք համարում էին քաղբանտարկյալ:

Երուսաղեմյան ողիսական: Վերադարձ

Մաս առաջին

Ներկայումս Ավստրալիայում ապրող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի նախկին մամլո քարտուղար Արթուր Հակոբյանը 15-ամյա ընդմիջումից հետո կարճատեւ այցելությամբ վերադարձել է հինավուրց քաղաք: Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք նրա տպավորությունների առաջին մասը:

Հինավուրց քաղաքը՝ Զիթենյաց լեռից:

«Թայ Էրուեյզի» N 777 ինքնաթիռն ավելի քան 15 րոպե ուշացումով ճանապարհ ընկավ Սիդնեյից, բայց անձնակազմը հոգաստար բարյացակամության եւ օրինակելի ծառայության շնորհիվ կարողացավ մեղմել այդ տհաճ իրավիճակը: Մինչեւ Բանկոկ թռիչքը 9 ժամ էր տեւելու, այնուհետեւ 11 ժամ եւս՝ մինչեւ Թել Ավիվ: 15 տարի հետո ծննդավայրս էի վերադառնում՝ ակնկալիքներով եւ տագնապալի հուզումներով համակված:

Սովորաբար չեմ սիրում թռչել, բայց չէի կարող մերժել Երուսաղեմ մեկնելու եւ որպես խորհրդատու եւ ուղեկցորդ աշխատելու ամերիկյան մի կինոընկերության առաջարկը: «Դեղահաբ կընդունեմ եւ կքնեմ ամբողջ ճանապարհին», մտածեցի եւ բարձրացա ինքնաթիռ: Բարեբախտաբար օդային ցնցումներն այնքան էլ սարսափելի չէին եւ լեփթոփն էլ բավական երկար ժամանակ զբաղված պահեց ինձ: Այնուհետեւ ներթռիչքային տեսաֆիլմերը օգնեցին կարճելու ժամանակը: Վայրէջքը հարթ էր ու սահուն:

Ճանապարհորդում էի ավստրալական անձնագրով, բայց դրանում նշված «Երուսաղեմ» բառը կարծես սթափեցրեց Թել Ավիվի օդանավակայանի աշխատակցին, եւ նա հարցրեց. «Դուք սաբրա՞ եք»: Սաբրան տեղացի հրեաներին տրված ժողովրդական որակավորում էր:

- Ո՛չ, ես հրեա չեմ, -ասացի:

Համակարգչի վրա նրա մատների շարժումը մի պահ կանգ առավ, եւ դեմքը մռայլվեց:

- Խնդրեմ, սպասե՛ք, -ասաց՝ ինձ հրավիրելով կողքի քաշվել, որ մյուս ուղեւորներին չխանգարեմ:

- Ինչ-որ խնդիր կա՞,- հարցրեցի:

- Ոչ մի խնդիր, պարզապես մի րոպե սպասեք,-ասաց:

Իհարկե, սպասումն ավելի երկար տեւեց:

- Ես օտար թղթակից եմ: Ինձ հրավիրել են որպես խորհրդատու մասնակցելու Երուսաղեմի մասին մի ֆիլմի նկարահանումներին: Մի ժամից հանդիպում է նշանակված պրոդյուսերի հետ: Ես պետք է այնտեղ լինեմ,- ասացի:

- Խնդրում եմ սպասե՛ք,- կրկնեց նա:

- Չեմ կարող սպասել: Եթե խնդիր կա, դիմեք կառավարության մամուլի գրասենյակին: Դուք պատճառ եք դառնում, որ ուշանամ,- պատասխանեցի եւ ինքս սկսեցի բջջայինով կապ հաստատել պրոդյուսերի հետ, բացատրել իրադրությունը:

Հանկարծ նա վեր կացավ, դուրս եկավ իր խցիկից, փիչ անց վերադարձավ եւ ինձ ուղարկեց մեկ ուրիշ գրասենյակ:

- Բարի գալուստ Իսրայել,- ասաց մի կին ոստիկան՝ հանձնելով ինձ իմ անձնագիրը:

Ստուգեցի էջերը եւ պարզեցի, որ B2 զբոսաշրջիկի վիզա էին խփել երեք ամիս ժամկետով: Ես այդքան երկար չէի մնալու անշուշտ: Շնորհակալություն հայտնեցի եւ դուրս եկա:

Դեպի Երուսաղեմ ճանապարհն անցա «ընկերովի» տախի վարձելով: Դա հարմար էր, առավել էժան: Բայց այդ քաղաքում դու պետք է մոռանաս ճանապարհային ամեն տեսակի քաղաքավարության կանոնները: Իսրայելցիները մեքենան քշում են տանկի նման: Հետիոտները պարտավոր են չափազանց զգույշ լինել: Ճանապարհ զիջելն «օտար» հասկացություն է, անտեսված բոլորի կողմից:

Բջջայինն ականջին «սոսնձած» վարորդը ձախ ձեռքով խուսանավում էր՝ անընդհատ հնչեցնելով մեքենայի ձայնային ազդանշանը եւ բոլորովին ուշադրություն չդարձնելով երթեւեկության ճանապարհային ազդանշաններին: Մեքենան կանգնեցնելու հարմար վայր գտնելը հազվագյուտ երջանկություն էր: Երբ մոտեցանք քաղաքին, հսկայական փոսեր «դիմավորեցին» մեզ: Կառուցման ընթացքում էր երթուղային մի ճանապարհ, որը սպասարկելու էր Երուսաղեմի շրջակա արվարձանները: Շատերի համար դա ուղղակի անհեթեթ ծրագիր էր: «Հիմարություն է, ասաց մի հրեա, ո՞ւմ է պետք դեպի Պիսգաս Ձեւ կամ Ֆրանսիական Բլուրներ տանող մի գնացք»: Այդ վայրերը ընդամենը մի քանի րոպեի ճանապարհ են քաղաքի կենտրոնից»:

Արաբները դա նույնիսկ «արբաղծություն» են համարում:

Քաղաքապետարանը կորցրել է խոհեմությունը՝ տգեղությունն ավելացնելով տգեղության վրա: «Մեր գեղեցիկ Երուսաղեմը կորցրել է իր վաղեմի տեսքը», ողբում էր մի ծերունի հրեա:

«Յաֆֆա դարպասների» մոտ վերջապես տեղ հասնելով՝ ես զարմանքով դիտեցի զբոսաշրջիկների հոծ խմբերին եւ անվտանգության աշխատակիցներին, որոնք զինված էին եւ պատրաստ ճնշելու ամեն մի խռովություն: Նրանց ներկայությունն այցելուների անվտանգությունն ապահովելու համար էր անշուշտ, բայց տեղացի արաբների համար՝ լուռ ու դառը տառապանքի պատճառ:

Պայուսակներս թողնելով քրիստոնեական թաղամասում վարձով տրվող սեփական մի տանը, շտապեցի տեսակցելու ամերիկացի պրոդյուսերի հետ:

Թարգմ. Հ. Ծ.

AZG NEW 6.QXD 8/19/2009 10:03 PM Page 1

Սփյուռքի անխոնջ մշակ՝ Լեւոն Թորոսյան

«Լեւոն Թորոսյանը իր բոլոր նախաձեռնություններում բարձր արհեստավարժություն ցուցաբերող, խորագիտակ ու նվիրյալ գործիչ է: Նաեւ հեսաֆրֆիր, հարուստ հոգեմտային աշխարհով օժտված անհատականություն: Նրա մեծ արժանիքներից մեկն այն է, որ չափազանց բծախնդիր է իր գրած եւ ասած ամեն խոսքի նկատմամբ, դրա բուն էության մեջ թափանցող եւ արծարծող: Մեծ արժեք ունեն նրա ստեղծած բառարանները, էլ չասած մշակութային լայն շառավիղ ունեցող նրա ամբողջ գործունեության մասին», ասում է արձակագիր, կինոգետ Սերգեյ Գալսյանը: Իսկ ՀՀ ժողովրդական արտիստ, ռեժիսոր Երվանդ Ղազանչյանը ժամանակին վավերել է. «Ազնիվ մտավորական, իր համակ գործունեությամբ հայանոպաստ ու հայրենասեր Լեւոն Թորոսյանին ենք մեծապես պարտական՝ ՀԲԸ Միության հովանու տակ, Բեյրութում «Վահրամ Փափազյան» թատերախմբի ստեղծումը»:

Իրապես, ամեն բարի գործ եւ մղում անանց հետք է թողնում եւ անուրանալի կերպով արժանանում գնահատանքի: Գեղեցիկ երեւույթ է դա ընդհանրապես, եւ առավելապես մեր օրերում, հատկապես երբ խոսքը վերաբերում է հայրենիք-սփյուռք փոխըփման ոլորտին:

Լեւոն Թորոսյանի հիշողության մեջ վառ են տպավորությունները հայրենիք առաջին այցելությունից: 1968-ին սփյուռքի ուսուցիչների խմբի կազմում (երկար տարիներ դասավանդել է Բեյրութի Հովակիմյան-Մանուկյան վարժարանում) նա ժամանեց Երեւան, ԱՕԿՍ-ի կողմից կազմակերպած մանկավարժների վերապատրաստման դասընթացքին: Այդ օրերին, Լեւոն Թորոսյանը արդեն որպես ճանաչված մտավորական եւ ուսուցիչ ելույթ ունեցավ հեռուստատեսությամբ, հոդված հրատարակեց «Հայրենիքի ձայն» թերթում: Այսօր հատուկ ջերմությամբ է հիշում նա հայաստանյան իր այցելությունը, իր շփումները հայրենիքի մտավորականության հետ:

... Արդեն իսկ նշանավոր կրթական-հասարակական գործիչ էր հայրը՝ սփյուռքում ճանաչված մանկավարժ, թատերագիր Հակոբ Թորոսյանը: Նրա «Թատերգութիւններ» խորագրով լույս տեսած մի քանի հատորները (1972-ականներ, Բեյրութ), որոնք հեղինակի բնորոշմամբ ներկայացնում են իրենցից «Կատակերգութիւններ եւ տրամախօսութիւններ ազգային եւ դպրոցական կեանքէ», երկար տարիներ սփյուռքի ընթերցողի սեղանի գրքերն էին: Եվ բացի այդ, տարբեր թատերախմբերի կատարողականի զարդը: «Գիրքը, գիրն ու գրականությունը՝ մեր տան հիմնական մթնոլորտն էր», ասում է Լ. Թորոսյանը: Եվ հետաքրքրական է, որ այդպիսի մթնոլորտի ծնունդ, նա, ավարտելով Բեյրութում ՀԲԸՄ Հովակիմյան-Մանուկյան վարժարանը, եւ ապա Հայկազյան համալսարանը, ձեռք է բերում միջուկային ֆիզիկոսի մասնագիտություն՝ արժանանալով մագիստրոսի կոչմանը: Երկու տարաբնույթ այս ասպարեզները նրա եռանդուն ստեղծագործական կյանքում ներդաշնակ միասնություն են կազմում, արձանագրելով ակներեւ գիտական նվաճումներ: Որպես ֆիզիկոս, Լ. Թորոսյանը հատկապես հիշատակում է իր հույժ հետաքրքրական աշխատանքը Վիեննայում, IAEA (ՄԱԳԱՏԵ)-ի շրջանակում գործող «Միջազգային միջուկային ուժանյութի» հատատության մեջ: Նշելի է նաեւ, որ մինչեւ 2006 թ. նա եղել է ՄԱԳԱՏԵ-ի եռամյա պարբերականի խմբագրապետ եւ անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն լեզուներով հրատարակել իր հոդվածները:

Իսկ Գիրքը մշտապես եղել է նրա կյանքի սիրեցյալ ընտրյալը, հավատարիմ ուղեկիցը: Անդրանիկ քայլերն այդ ասպարեզում, դարձյալ ֆիզիկայի մարզին են պատկանում: Լիբանանում ստեղծած եւ հրատարակած նրա առաջին հատորները՝ անգլերեն եւ ֆրանսերեն ֆիզիկայի վեց դասագրքերն էին: Շուրջ 40 տարի (1960-2000 թթ.) դրանք եղել են Լիբանանի Կրթության նախարարության կողմից հաստատված-արտոնված, տվյալ բնագավառի միակ դասագրքերը:

1971-ին ամուսնանալով ավստրիացի ճարտարապետուհի տիկին Վալթրաութի հետ եւ բնակություն հաստատելով Վիեննայում՝ Լեւոն Թորոսյանը շարունակում է իր գիտահրատարակչական եռանդուն գործունեությունը: 1984-ից մեկը մյուսի հետեւից լույս են տեսնում նրա կազմած, մեկնաբանած եւ խմբագրած հայերեն-գերմաներեն եւ գերմաներեն-հայերեն բառարանները: 1990-ականներին Բեյրութի համբավանուն «Շիրակ» հրատարակչատունը (հիմնադիր-տնօրեններ Հաննեսյան եղբայրներ) լույս է ընծայում ֆրանսերեն եւ գերմաներեն լեզուների հայերենով մատուցվող ինքնուսուցման գրքեր, նաեւ հայերեն-անգլերեն ու անգլերեն-հայերեն բառարաններ: 1994-2002 թթ. երբ Լ. Թորոսյանը ֆրանսահայ մտավորական Ռոպեր Տեր-Մերկերյանի հետ վարում է Մարսելի «Ժամանակակից արեւմտահայերենի եզրաբանական խորհուրդը», առանձին հատորով լույս են տեսնում նրա «Մասնագիտական չորս բառացանկերը» («Ուղեցոյց»), որոնցում ներկայացված էին Լ. Թորոսյանի առաջադրված մի շարք օտարալեզու բառերի (տերմինների) նորամույծ հայկական տարբերակներ: Բացի այդ, մտավորականի, գիտնականի պրպտուն միտքն ու շրջահայաց հետաքրքրասիրությունը մղում են Լ. Թորոսյանին մի յուրօրինակ ձեռնարկի: Նա մանրամասն ուսումնասիրում է աշխարհի օտար երեւելի աղբյուրներում զետեղված (Encyclopaedia Britannica, 28 հատոր, Encyclopaedia La Rousse, 21 հատոր եւ Der Große Bochhaus, 18 հատոր) տեղեկություններ հայկական նյութերին վերաբերող, եւ իր հույժ արժեքավոր վերլուծական դիտարկումներն ու եզրահանգումները հրատարակում է այդ տարիներին Վիեննայում լույս տեսնող «Հայրք» (խմբագիր եւ հրատարակիչ Հայր Կարապետյան) պարբերականում: Այս ուղեցուցանիշ պրպտումները հետագայում հրատարակվում են «Օտարները՝ հայերու մասին» առանձին հատորով: Դրա հրատարակման փաստի, ինչպես նաեւ Encyclopaedia Britannica-ի խմբագրության հետ վարած Լ. Թորոսյանի մի շարք թղթակցությունների արդյունքում, վերոհիշյալ օտար հետագա հրատարակություններում առավել ճշգրիտ մատուցվեցին հայկական նյութերին առնչվող որոշ տեղեկություններ, փաստեր:

Իր բազմաժավալ գիտահրատարակչական, մանկավարժական, հասարակական գործունեության ծիրում, Լեւոն Թորոսյանը ժամանակ ու եռանդ է հատկացնում նաեւ գեղարվեստական գրականությանն ու արվեստին: Նրա թարգմանությամբ ֆրանսերեն լույս է տեսնում Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները», որ մեծ հետաքրքրության է արժանանում ֆրանսալեզու ընթերցողական շրջանակներում: Դրանից հետո նա ձեռնամուխ է լինում Փարիզում հաստատված հալեպահայ վիպասան Մովսես Պչախչյանի «Լուսաւոր աչքերով օտարականը» վեպի թարգմանությանը: Իսկ 1959-ին, Բեյրութում, նա մեծապես սատար է լինում ՀԲԸ Միության «Վահրամ Փափազյան» թատերախմբի ստեղծմանը, որի վերջին տասնամյակի նվիրյալ ռեժիսոր-բեմադրիչն է ՀՀ ժողովրդական արտիստ Երվանդ Ղազանչյանը: Իր հոր ձիրքից ժառանգելով սեր եւ ընկալում թատերական արվեստի հանդեպ, Լեւոն Թորոսյանը նաեւ գրում է ծավալուն մասնագիտական վերլուծություններով օժտված էսսե, որ տեղ է գտնում «Վ. Փափազյան» թատերախմբի 50-ամյակին նվիրված հատորում: Անմասն չեղավ Լ. Թորոսյանի գործունեությունը նաեւ կինոյի ասպարեզին: Տարբեր տարիներին նա եղել է Վենետիկում, Լոքառնոյում եւ Կաննում կայացած միջազգային կինոփառատոների ժյուրիի անդամ: Եվ իր տպավորություններով այդ փառատոների մասին, բազմիցս հանդես է եկել Փարիզի «Յառաջ» թերթում:



Իրապես, բազմաբովանդակ, իմաստալից կյանք ու անխոնջ նվիրում բոլոր այն ասպարեզներին, որոնցում նշանակալի հետք է թողնում Լեւոն Թորոսյանը իր գործով, իր խոսքով, իր գրչով: Եվ գոյություն ունի նաեւ մի հիշարժան ու գեղեցիկ հանգամանք նրա կյանքում, առանց որի, գուցե, այս ամենը չունենար այն յուրահատուկ երանգավորումն՝ որն ունի:

Դա Լեւոն Թորոսյանի կյանքի ուղեկից, ավստրուհի, տիկին Վալթրաութն է: Որը ո՛չ միայն սիրում է հայերեն խոսել, այլեւ հարգալից սիրով ճանաչում ու գնահատում է այն ամենը, ինչ հայ ու հայկական է: Ցավոք, քչերը գիտեն տիկին Վալթրաութի անձնվեր ներդրումը Երկրաշարժից տուժած Հայաստանին: Հրապարակելով հոդված-կոչ Ավստրիայի «Kurier» օրաթերթում, նա ձեռնամուխ եղավ Ավստրիայի մի շարք քաղաքներում դրամահավաքի՝ հօգուտ Երկրաշարժից տուժած աղետի գոտիների վերականգնմանը եւ մարդասիրական օգնությանը: Նրա ջանքերով հավաքած եւ իր սեփական ներդրման նշանակալի գումարը փոխանցվեց աղետի գոտի: Գյումրին շնորհակալ է ավստրուհուն իր բարեգութ ու ուրացավ գործի համար:

... Մի՞շտ գեղեցիկ օր, մենք հանդիպեցինք Բեյրութում, մեր այդքա՜ն սիրված «Շիրակ» հրատարակչատան՝ Կարապետ Հաննեսյանը, Լեւոն Թորոսյանը եւ տողերիս հեղինակը: Զրուցեցինք ջերմ ու երկար... Շա՜տ բաների մասին... Սփյուռքի, հայրենիքի, ներկայիս լիբանանահայ եւ վիեննահայ օջախների մասին... Կարոտի՞ մասին... «Երանի՜,-ասաց Լեւոն Թորոսյանը,- հիմա ամենքս Հայաստանում լինեինք, «Շիրակն» էլ Երեւանի ուրտում լիներ, մեր բոլոր հրատարակած գրքերն էլ՝ այնտեղ լույս աշխարհ գային, մեր բոլոր ընթերցողներն էլ՝ հայաստանցիներ լինեին: Լիներ շեն ու շենշող, աներկրաշարժ, ծաղկուն եւ մեզ ամենքիս իր ուրտում միացնող Հայաստան»: Եվ մի պահ մեզ թվաց, որ այդպես է:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բեյրութ-Երեւան

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

«Կանայք եւ տղամարդիկ. իրական պատմություններ» գիրքը ամրապնդում է ժողովուրդների բարեկամությունը

Վրացի լրագրող Թամարա Բալաձեն վերջին անգամ Երեւան է այցելել նախորդ տարի, երբ տեղի ունեցավ «Կնոջ ձայնը Հարավային Կովկասում» գրքի շնորհանդեսը: Այդ ժամանակ շատերը հարցրեցին՝ ինչո՞ւ կնոջ ձայնը, իսկ որտե՞ղ է տղամարդու ձայնը, ո՞վ պետք է լսի նրան: Հենց այս հարցերի պատասխանի փնտրտուքն էլ հիմք հանդիսացավ, որ լույս տեսնի «Կանայք եւ տղամարդիկ. իրական պատմություններ» գիրքը: Նախագիծն իրականացնում է Վրաստանում: Ջեռնարկը կովկասյան տարածաշրջանի տարբեր ազգությունների պատկանող մարդկանց առօրյա հոգսերի, ուրախությունների, կյանքի, կենցաղի մասին է: Թամարա Բելաձեն նկատում է, որ սկզբում մտադրվել էին գրքում ներկայացնել կնոջ եւ տղամարդու տարբերությունները, կյանքի եւ իրադարձությունների նկատմամբ տարբեր վերաբերմունքը: «Սակայն նյութերը հավաքելուց հետո հասկացան, որ չկան սեռային տարբերություններ: Պարզապես մարդկանց մտածելակերպն է անհատական»:

Գրքին կցված է նաեւ սկավառակ, որտեղ ներառված են աուդիոծրագրերը: «Ժանրն օգտագործվել է Վրաստանում՝ որպես վրաց-աբխազական խաղարար նախագիծ: Ընթացքում մեզ են միացել Հարավային Կովկասի ճանաչված եւ չճանաչված պետությունների ներկայացուցիչները», նկատեց Թամարա Բալաձեն: Նա պատմում է, որ Թբիլիսիում կայացած կլոր-սեղան քննարկման ժամանակ հիմնական շեշտը դրել էին աբխազական օրագրերի վրա: «Սպասելիքները գերազանցեցին մեր պատկերացումները: Աբխազ կինը պատմում էր իր մենակյաց կյանքի մասին: Ընթերցումից հետո վրացի երիտասարդ կինը հուզված ասաց, որ դա կարծես իր կյանքի պատմությունը լինի»:

Երկու շաբաթ առաջ Բաֆվում տեղի ունեցած գրքի շնորհանդեսի ժամանակ էլ ընթերցեցին արցախցի կնոջ պատմությունը, որ պատերազմի ժամանակ փրկել է ադրբեջանցի փոքրիկի կյանքը:

Նախագծի կազմակերպիչները հավաստիացնում են, որ այս կերպ մերձենում են Հարավային Կովկասում ապրող ազգությունները: Այլ կերպ ասած՝ սկիզբ է դրվում ժողովրդավարական դիվանագիտությանը: Վրացի լրագրողները բացառում են քաղաքական ենթատեքստերն ու հավելում, որ այսօր գլխավորը մարդու կյանքն է:

Ավելի քան 3 տարի օրագրերը հեռարձակվել են նաեւ ռադիոյով:

Բելաձեն նկատում է, որ սկզբում ադրբեջանական ռադիոընկերությունները հրաժարվում էին հեռարձակել հայկական օրագրերը: Սակայն մեկ տարի անց հայկական պատմությունները հեռարձակվեցին Բաֆվում:

«Գիրքը կոչված է բարձրացնելու հասարակ մարդկանց վստահությունը միմյանց նկատմամբ: Հնարավոր է, սա այն միջոցներից է, երբ միջմշակութային երկխոսության միջոցով կարելի է զարգացնել խաղաղ երկխոսություն: Ամրապնդել ժողովուրդների խաղաղ համագոյակցությունը, ովքեր Հարավային Կովկասում անցել են պատերազմների բովով», ասաց Բելաձեն:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ռոք մյուզիքլ՝ նվիրված Մոցարտին

Սեպտեմբերին Փարիզում տեղի կունենա աշխարհահռչակ ավստրիացի կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս Մոցարտին նվիրված ռոք օպերայի պրեմիերան՝ Mozart L'Opera Rock: Վեց միլիոն եվրո արժողությամբ մյուզիքլը կտեւի երկու ժամ, բեմում կլինեն ավելի քան 60 երգիչներ, դերասաններ ու երաժիշտներ:

Մոցարտի երաժշտությունը, որ մինչեւ այժմ հնչում էր միայն դասական երաժիշտների կատարմամբ, առաջին անգամ կհնչի վերափոխված՝ ռոքային ոճով: Ինչպես հայտնում է Ռոյթեր գործակալությունը, Մոցարտի ստեղծագործությունների ռոքային տարբերակն արդեն ձայնագրվել է ու շուտով կվաճառվի:

«Մոցարտ» ռոք մյուզիքլի պրոդյուսեր Ալբեր Կոենը վերոնշյալ գործակալությանը տված բացառիկ հարցազրույցում նշել է. թե Մոցարտին համարում է «առաջին ռոք աստղը», «առաջին անկախ ու ազատ մտածելակերպով կոմպոզիտորը», որից ոգեշնչվել են նաեւ բազմաթիվ արդի երգահաններ ու ռոք երաժիշտ-կատարողներ:

Ռոք մյուզիքլը Կոենի երկրորդ նմանատիպ աշխատությունն է: Նախորդ տարի նրա «Արեւի արքա» մյուզիքլը դիտեցին ավելի քան 1.5 մլն մարդ: Այն հաջողությամբ ցուցադրվել է Ֆրանսիայում, Բելգիայում ու Շվեյցարիայում:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մոսկվան սպասում է Խոսե Կարերասին

Ռուսաստանում «Իսպանիայի օրեր» մշակութային փառատոնը կմեկնարկի հոկտեմբերի 10-ին՝ իսպանացի աշխարհահռչակ օպերային երգիչ Խոսե Կարերասի մենահամերգով: Այն տեղի կունենա Մոսկվայի միջազգային երաժշտության տանը: Արդեն հայտնի է, որ իսպանացի երգիչը ելույթ կունենա «Ռուսական ֆիլհարմոնիա» սիմֆոնիկ նվագախմբի ուղեկցությամբ: Իսպանական օրերը կեզրափակվեն հոկտեմբերի 15-ին Իզաբել Պանտոխի մենահամերգով: Պանտոխան հայտնի է իսպանական ֆոլկ կատարումներով: Ինչ վերաբերում է Կարերասի համերգին, համաձայն ռուսական ՁԼՄ-ների, ստեղծվել է անվտանգության շատ ուժեղ համակարգ, որ պետք է ամեն վայրկյան հսկի երգչին:

Իր հարցազրույցներից մեկում Կարերասը խոստովանել է, որ սիրով է այցելում Մոսկվա: «Ռուս հանդիսատեսի համար երգելը մեծագույն հաճույք է: Նրանք ընկալում են յուրաքանչյուր հնչյունը, նոտան»: Վերջին անգամ Կարերասը Ռուսաստան է այցելել 2008-ին: Այդ ժամանակ նա համերգային հյուրախաղերով այցելեց Կազան, Եկատերինբուրգ եւ Տյումեն:

Հ. Հ.

AZG NEW 7.QXD 8/19/2009 11:05 PM Page 1

Կարեն Այլազյանն առաջին մեդալը պարգեւեց Հայաստանին

Լեհասանի Շեցին խաղաքում ընթացող բռնցքամարտի Եվրոպայի երիտասարդական առաջնությունում Հայաստանին առաջին մեդալը պարգեւեց մինչեւ 51 կգ քաշային Կարեն Այլազյանը: Քառորդ եզրափակիչում 5-0 հաշվով հաղթելով մոլդովացի Իգոր Օսիպովին, Կարենը մտավ կիսաեզրափակիչ՝ իր համար նվազագույնն ապահովելով բրոնզե մեդալ: Եզրափակիչի ուղեգրի համար մրցավեճում նրա մրցակիցը կլինի լեհ Դոմինիկ Պոլակի եւ բուլղարացի Ստեֆան Իվանովի մենամարտի հաղթողը:

Իսկ ահա երկու հաղթանակ տոնած Վլադիմիր Մարգարյանին չհաջողվեց մտնել կիսաեզրափակիչ, ինչը հնարավորություն կտար նրան իր համար ապահովել առնվազն բրոնզե մեդալ: Քառորդ եզրափակիչ մենամարտը Գերմանիայի դրոշի ներքո հանդես եկող Արայիկ Մարությանի հետ շատ համառ բնույթ կրեց: Հայազգի երկու բռնցքամարտիկները գրեթե չէին զիջում միմյանց: Ի վերջո նվազագույն՝ 1-0 հաշվով հաղթանակը շնորհվեց Մարությանին, որն իր

համար առնվազն բրոնզե մեդալ ապահովեց: Կիսաեզրափակիչում Մարությանի մրցակիցը կլինի ռուսաստանցի Ալեքսանդր Բեսպուտինը, որը 7-0 հաշվով պարտության էր մատնել հունգարացի Գեորգ Բենեին: Կիսաեզրափակիչի մյուս զույգը կազմել են անգլիացի Մարկ Հեֆրոնը եւ լեհ Քամիլ Գարդզիելիկը:

Իր առաջին մենամարտը հաղթանակով պսակեց գերմանրաբային Հովհաննես Օհանյանը, որը պարտության մատնեց ուկրաինացի Վլադիմիր Տրոցկուն: Քառորդ եզրափակիչում մեր մարզիկի մրցակիցը կլինի խորվաթ Դինո Մանսուրը, որը 2-0 հաշվով հաղթեց գերմանացի Յակոբ Մորգելին:

Քառորդ եզրափակիչ մտավ նաեւ մինչեւ 69 կգ քաշային կարգում հանդես եկող Հարություն Աբրահամյանը: Նա 4-2 հաշվով հաղթեց էստոնացի Դմիտրի Կոռնիլինին: Հաջորդ փուլում Հարությունը կմրցի բելառուսցի Ալեքսանդր Հրիհորչուկի հետ, որն առավելության էր հասել մոլդովացի Իվան Տուրչանի նկատմամբ: Հարությունն իր առաջին մենամարտն անցկացրեց, քանի որ առաջին փուլում ազատ էր:

Հետագա պայքարից դուրս մնաց Արամ Ավագյանը, որը մինչեւ 57 կգ քաշայիններին մրցավեճում մինչ այդ երկու հաղթանակ էր տոնել: 1/8 եզրափակիչում նրան չհաջողվեց հաղթահարել ռումինացի Մարին Դրագոսի դիմադրությունը (1-2): Վերջինս հաջորդ փուլում ուժերը կչափի ուելսցի Ժոզեֆ Կորդինայի հետ:

Կանանց բռնցքամարտն ընդգրկվեց օլիմպիական ծրագրում

Միջազգային օլիմպիական կոմիտեի գործկոմի որոշմամբ կանանց բռնցքամարտն ընդգրկվել է 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիական խաղերի ծրագրում: Մրցումները կանցկացվեն քաշային 3 կարգում (51, 60 եւ 75 կգ): Կանանց բռնցքամարտի ընդգրկմամբ կրճատվել է տղամարդկանց քաշային կարգերի թիվը: Դա վերաբերում է ամենաթեթեւ քաշային կարգերին: Նախկին 48, 51, 54 եւ 57 կգ քաշային կարգերի փոխարեն սահմանվել են երեքը՝ 49, 52 եւ 56 կգ: Քաշային մյուս կարգերը՝ սկսած 60 կգ-ից, անփոփոխ են մնացել: Այս փոփոխությունն ուժի մեջ կմտնի հաջորդ տարվանից:

AIBA-ի տեխնիկական հանձնախումբը մի քանի փոփոխություններ է մտցրել: Այսուհետեւ մենամարտի ընթացքում հանդիպման հաշիվը ցուցանակի վրա չի գրանցվելու, որպեսզի դա չազդի բռնցքամարտիկների գործողությունների վրա: Միայն մենամարտի ավարտից հետո մրցավարների տված միավորներն ու ընդհանուր հաշիվը կգրանցվեն ցուցանակին:

Որոշվել է նաեւ Միլանում կայանալիք բռնցքամարտի աշխարհի առաջնության ժամանակ բռնցքամարտիկներին բաշխել ըստ AIBA-ի համաշխարհային վարկանիշի: Քաշային յուրաքանչյուր կարգում վիճակահանությունից առաջ 8-ական ուժեղագույնները կառանձնացվեն:

Քարամյանները խմբային մրցաշարում չեն խաղա

Կայացան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի առաջին 5 հանդիպումները: Այդ փուլում հաջողության հասած 10 ակումբները կընդգրկվեն խմբային մրցաշարում:

Հայ ֆուտբոլասերների ուշադրության կենտրոնում առաջին հերթին ռումինական «Տիմիշորայի» եւ գերմանական «Շտուտգարտի» մրցավեճն էր, քանի որ դաշտի տերերի կազմում խաղադաշտ էին դուրս եկել Քարամյան եղբայրները: Արմանը մասնակցեց ողջ հանդիպմանը, իսկ Արտավազդը, որն այդ խաղում ձախ պաշտպանի պարտականություններ էր կատարում, փոխարինվեց 77-րդ րոպեին:

Հանդիպումն անհաջող դասավորվեց «Տիմիշորայի» համար: 28-րդ րոպեին ռումինացիների դարպասապահ Կոստել Ֆանե Պանտիլիմոնը խախտեց կանոնները եւ Թիմո Գեբհարտը 11 մ հարվածով բացեց հաշիվը: Երկու րոպե անց բելառուսցի լեգեոնական Ալեքսանդր Գլեբի անհատական հիանալի անցումն ավարտվեց 2-րդ գոլով: Դաշտի տերերին չհաջողվեց փոփոխել հաշիվը: Պարտվելով 0-2 հաշվով, «Տիմիշորաան» գործնականում դուրս մնաց հետագա պայքարից: Դժվար է հավատալ, որ

պատասխան խաղում, հյուրընկալվելիս ռումինական ակումբը կարող է հաղթել 3 գնդակի տարբերությամբ:

Խմբային մրցաշարի ուղեգրի հարցը գործնականում լուծեցին նաեւ Լոնդոնի «Արսենալն» ու հունական «Օլիմպիակոսը», որոնք միեւնույն՝ 2-0 հաշվով հյուրընկալվելիս առավելության հասան համապատասխանաբար «Սելթիկի» եւ «Շերիֆի» նկատմամբ: Համառ մրցապայքարում անցավ Լիսաբոնում կայացած «Սպորտինգ»-«Ֆիորենտինա» հանդիպումը: Արդեն 6-րդ րոպեին Վարգասն առաջ մղեց իտալացիներին: Ընդմիջումից հետո Վուկչեւիչը վերականգնեց հավասարակշռությունը, իսկ ֆիչ անց Վելոզուն առաջ մղեց «Սպորտինգին»: Հյուրերին պարտությունից փրկեց Ջիլարդինոն (2-2): «Կոպենհագեն»-«Ապոել» խաղում դաշտի տերերին հաղթանակ պարգեւեց Պոսպեխի խփած միակ գնդակը:

Չավեսը պատերազմ է հայտարարել գոլֆին

Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը լսել անգամ չի ցանկանում գոլֆի մասին: Նա այդ մարզաձեւը համարում է բուրժուական եւ հրամայել է փակել երկրում գործող գոլֆի մի քանի հայտնի խաղադաշտերը:

Այս առնչությամբ լրատվամիջոցները տարբեր ենթադրություններ են անում: The Wall Street Journal ամսագրի կարծիքով, բացառված չէ, որ նման քայլի Չավեսը դիմել է հաշվի առնելով որոշ պետությունների դառը փորձը: Օրինակ՝ ԽՍՀՄ-ում 1988-ին գոլֆի առաջին խաղադաշտն էին կառուցել, իսկ մեկ տարի անց Բեռլինի պատը վերացրին: Կամ էլ Չավեսը հիշել է Շոտլանդիայի պատմությունը, երբ 1502-ին Յակոբ 4-րդը վերացրել էր գոլֆի արգելքը, իսկ 11 տարի անց երկիրը մնացել էր առանց արքայի՝ պարտություն կրելով անգլիացիների հետ ճակատամարտում: Կա նաեւ այլ կարծիք, որ Չավեսին դուր չի գալիս, երբ մրցումների ժամանակ գոլֆիստները հաճախակի են հիշատակում Աստծուն: Մեկ այլ վարկածի համաձայն, Վենեսուելայում պարզապես չկան լավ գոլֆիստներ, որոնք ունակ են երկիրը միջազգային մրցասպարեզներում ներկայացնելու:

ՖՈՒՏԲՈԼ

Դժգույն խաղ

Երեկ «Հանրապետական» մարզադաշտում կայացավ առաջնության 15-րդ տուրից հետաձգված «Փյունիկ»-«Բանանց» հանդիպումը, որի նկատմամբ հետաքրքրասիրությունը մեծ էր: Վերջին շրջանում երկրի չեմպիոնի ելույթները չեն գոհացնում ոչ միայն թիմի մարզիչներին, այլեւ ֆուտբոլասերներին: Հենրիխ Մխիթարյանի Դոնեցկ մեկնելուց հետո «Փյունիկը» լուրջ հիմնախնդիրներ ունի հարձակման գծում եւ պատահական չէ, որ վերջին 7 հանդիպումներից 4-ում չի կարողացել գրավել մրցակիցների դարպասները, որի պատճառով ընդամենը 2 հաղթանակ է տոնել: Ճիշտ է, մարզիչները հույս ունեին, որ բրազիլացի Մարկոսը լիովին կփոխարինի Մխիթարյանին, սակայն նախկին արարատցին առայժմ լավ մարզավիճակում չէ: Բացի այդ էլ, «Արարատի» հետ նախորդ խաղում Մարկոսը ոտնաթաթի վնասվածք էր ստացել եւ Գեւորգ Ղազարյանի հետ չմասնակցեց հանդիպմանը:

«Բանանցի» հետ խաղին չէր մասնակցում նաեւ «Փյունիկի» երիտասարդ պաշտպան Կարեն Խաչատրյանը, որն անհասկանալի պատճառով հեռացվել էր թիմից: Ինչ վերաբերում է «Բանանցին», ապա նախորդ խաղում «Միկայի» նկատմամբ տոնած կամային հաղթանակը հույս էր ներշնչում, որ չեմպիոնի հետ մրցավեճում եւս մարտականորեն կգործեն թիմի ֆուտբոլիստները: Սակայն խաղը չարդարացրեց ֆուտբոլասերների սպասելիքները:

Երկու թիմերն էլ շատ դժգույն խաղ ցուցադրեցին, գոլային սակավաթիվ պահեր ստեղծեցին: Դրանցից մեկը 14-րդ րոպեին իրացրեց Կառլեն Մկրտչյանը՝ հաղթանակ պարգեւելով «Փյունիկին»: Իսկ «Բանանցը» բաց թողած գոլից հետո էլ կարծես մտադիր չէր պայքարել խաղը փրկելու համար: «Փյունիկը» վաստակեց 41 միավոր եւ միանձնյա գլխավորեց աղյուսակը:

Անասասյանը հաղթողի հավակնորդներից է

Աբու Դաբիի շախմատի մրցաշարի 7-րդ տուրից հետո աղյուսակը գլխավորող ստվար խմբից առաջատարի դերը ստանձնեցին Աշոտ Անասասյանը, ռուսաստանցի Ալեքսանդր Ռահիմանովը եւ եգիպտացի Բասեմ Ամինը, որոնք վաստակել են 6-ական միավոր: Անասասյանը սեւերով հաղթեց Ուզբեկստանի ներկայացուցիչ Անտոն Ֆիլիպովին, Ամինը պարտության մատնեց Դմիտրի Բոչարովին, իսկ Ռահիմանովը սեւերով առավելության հասավ Հրանտ Մելքումյանի նկատմամբ: Վերջինիս հաշվին գրանցված է 5 միավոր:

Զավեն Անդրեասյանն առաջատարներից հետ է մնում կես միավորով: Նա 7-րդ տուրում ոչ-ոքի ավարտեց հանդիպումը հնդիկ շախմատիստ Լակսմանի հետ: Հաջող են հանդես գալիս նաեւ Հայր Սիմոնյանն ու Լիլիթ Գալոյանը, որոնց հաշվին 5-ական միավոր է գրանցված: Սիմոնյանը ոչ-ոքի խաղաց Սալեհ Սալեմի հետ, իսկ Գալոյանը հաղթեց Զոնիին:

Մրցաշարի ավարտին մնաց երկու տուր, որոնք էլ ի հայտ կբերեն մրցանակակիրներին: 8-րդ տուրում Աշոտ Անասասյանը սպիտակներով կխաղա ռուսաստանցի Ռոման Օվեչկինի հետ: Անդրեասյանի մրցակիցը կլինի ուկրաինացի գրոսմայստեր Յուրի Դրոզդովսկին, իսկ Մելքումյանը ուժերը կչափի Անտոնիո Վիանիի հետ: Կարեւոր նշանակություն կունենա նաեւ մյուս երկու առաջատարների՝ Ալեքսանդր Ռահիմանովի եւ Բասեմ Ամինի մրցավեճը:

Դանիելյանը 21-րդ տեղում է

Հունաստանում ավարտվեց շախմատի «Ակրոպոլիսի գավաթի» 24-րդ խաղարկությունը: Էլինա Դանիելյանը 9 հնարավորից վաստակելով 5,5 միավոր, գրավեց 21-րդ տեղը: Ավարտական տուրում նա ոչ-ոքի խաղաց Սթելիոս Հալկիասի հետ:

Չորս շախմատիստներ՝ բոսնիացի Բորկի Պրեդրեւիչը, հույն Խրիստոս Բանիկասն ու Իոանիս Պապաիոանուն եւ բուլղարացի Աթանաս Կոլեւը վաստակեցին բոլորից շատ՝ 6,5-ական միավոր: Հաղթող ճանաչվեց Բորկի Պրեդրեւիչը, որն իր հակառակորդներին գերազանցեց լրացուցիչ գործակիցներով: Ավարտական տուրում այս քառյակի միջեւ կայացած պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Միավորը կիսեցին Բանիկասն ու Պրեդրեւիչը, Պապաիոանուն ու Կոլեւը:

Վրացիները բողոքում են

Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան հայտարարություն է տարածել, որ եթե Ցխինվալի «Սպարտակը» հանդես գա Ռուսաստանի առաջնի խմբի առաջնությունում, ապա կդիմի ՖԻՖԱ-ին այդ երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու պահանջով:

Սակայն, ինչպես հայտարարել է Հարավային Օսիայի ֆիզիկական կուլտուրայի, սպորտի, զբոսաշրջության եւ երիտասարդության հարցերի փոխնախարար Բահվա Թեդեեւը, նման մտադրություն չկա: Բացի այդ էլ, որպեսզի այլ պետության թիմին թույլատրեն մասնակցել ՌԴ առաջնությանը, հարկավոր է, որ այդ մրցաշարը բաց լինի:

Վերջին տարիներին Ցխինվալի «Սպարտակը» հանդես է գալիս Հյուսիսային Օսիայի սիրողական առաջնությունում, ինչը նախկինում եւս վրաց ֆուտբոլային չինովնիկների դժգոհությունն էր հարուցում: Մինչեւ անցած տարվա օգոստոսը «Սպարտակը» սեփական հարկի տակ նշանակված հանդիպումներն անցկացնում էր Վլադիկավկազում: Այժմ որոշվել է մրցակիցներին հյուրընկալել Ցխինվալի մարզադաշտում:

Շուտով Ցխինվալի հին մարզադաշտի փոխարեն կկառուցվի նորը՝ արհեստական խոտածածկով:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW 8.QXD 8/19/2009 11:09 PM Page 1

Ապահովագրման մի շարք դասեր կկիրառվեն նաեւ Ղարաբաղում

Հայաստանյան «Գրիար-Ինշուրանս» ապահովագրական ընկերությունը հուլիս ամսից Արցախում եւս բացել է իր մասնաճյուղը:

Ընկերության գործադիր տնօրեն **Արմեն Պետրոսյանը** վստահ է, որ ապահովագրության համակարգը Ղարաբաղում նույնպես զարգանալու հեռանկարներ ունի: «Մենք բաջ գիտակցում ենք, որ Արցախում բացելով մասնաճյուղ եւ առաջինը լինելով տեղի շուկայում, ինքներս պետք է ձեւավորենք ապահովագրական մշակույթը: Ընկերության ղեկավարությունն այդ քայլին դիմելուց առաջ, նախ, ուսումնասիրել է ապահովագրական շուկան: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայունորեն զարգանում է, եւ արդեն ժամանակն է, որ ֆինանսական այս ինստիտուտը եւս գործի Արցախում», **«Ազգի»** թղթակցի հետ զրույցում ասաց նա: Տնօրենի խոսքով, իրենք ԼՂՀ-ին նայում են ոչ միայն որպես ապահովագրական շուկայի, այլեւ ուզում են իրենց ներդրումն ունենալ երկրի տնտեսության մեջ: Ստացված շահույթը, ինչպես հավաստիացնում է Ա. Պետրոսյանը, ամբողջությամբ կներդրվի մասնաճյուղի զարգացման ծրագրերում:

Ընկերությունում տեղյակ են, որ տարիներ առաջ Ղարաբաղում ուրիշ ձախողված փորձեր արվել են ապահովագրական գործունեություն իրականացնելու ուղղությամբ, սակայն դա իրենց չի վախեցնում:

Ո՞ր բնագավառներում կծավալվի ապահովագրությունը: Ի պատասխան այս հարցի, գործադիր տնօրենը նշեց, որ արդեն պլանավորված է ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը, մասնավորապես, 1,7 տոկոս սակագնով: Այսինքն, ավտոմեքենայի արժեքի 1,7 տոկոսը լինելու է ապահովագրական վճարը, որը գործելու է մեկ տարվա ընթացքում: Իսկ վնասի չափի գնահատումն իրականացվելու է անկախ փորձագետների միջոցով: Ապահովագրությունը ծավալվելու է նաեւ գույքի, երաշխիքի, դժբախտ պատահարներից, հանկարծակի հիվանդություններից ապահովագրելու ուղղությամբ: Այս դասերում, ըստ Ա. Պետրոսյանի, գայթակղիչ պահեր, իրոք, կան: «Քաղաքացին ինքն է որոշելու իր նկատմամբ ունեցած մեր պատասխանատվության չափը: Օրինակ, որպեսզի մեր ընկերությունը 100.000 դրամի չափով պատասխանատվություն ստանձնի՝ քաղաքացին պետք է վճարի, մեկ տարվա կտրվածքով, 1000 դրամ: Խոսքը վերաբերում է կյանքի եւ առողջության ապահովագրմանը: Իսկ ռիսկերը հետեւյալն են՝ դժբախտ դեպքերի հետեւանքով ժամանակավոր անաշխատունակություն, մշտական անաշխատունակության, աչքի կամ վերջույթի կորուստ եւ մահ: Կա նաեւ առողջությանը պատճառած վնասի ապահովագրում», տեղեկացրեց նա: Տնօրենը պարզաբանման կարգով միաժամանակ նշեց, որ բացի քաղցկեղից, տուբերկուլյոզից, հոգեկան ու մաշկային-վեներական հիվանդություններց, մյուս բոլոր հիվանդությունների դեպքում քաղաքացին կարող է ստանալ փոխհատուցում:

Մեր այն հարցին, թե կա՞ն արդյոք ապահովագրման ծրագրեր գյուղատնտեսության բնագավառում՝ հաշվի առնելով նաեւ այն հանգամանքը, որ Ղարաբաղը ագրարային երկիր է, Արմեն Պետրոսյանը պատասխանեց, որ տեսականորեն կա այդ հնարավորությունը, որովհետեւ խորհրդային ժամանակներում գյուղատնտեսական ապահովագրությունն իրականացնում էր Պետաքը: Ներկա պարագայում, սակայն, այդ մեխանիզմները չեն գործում: Նախ, պետությունն ինքը պիտի անի առաջին քայլերը, մասնավորապես, հակակարկտային կայանքների տեղադրման, անհրաժեշտ ագրոմիջոցառումների իրականացման գործում ֆերմերներին աջակցելու առումներով: Առկա պայմաններում ապահովագրման վերցնելու ռիսկը շատ բարձր է, այն միանշանակ վնասաբեր կլինի ընկերության համար: Բայց հետագայում, երբ այդ մեխանիզմները Ղարաբաղում կձեւավորվեն, անշուշտ, ձեռնամուխ կլինեն գյուղատնտեսության ապահովագրմանը:

Մեր զրույցին ներկա՝ «Գրիար-ինշուրանսի» արցախյան մասնաճյուղի տնօրեն Ալեքսանդր Աղասարյանը հետագա ծրագրերի առնչությամբ շեշտադրում արեց, որ ռազմականացված գոտի համարվող Արցախում առավել մեծ է դժբախտ պատահարների հավանականությունը: Այս կապակցությամբ նա նպատակահարմար համարեց ապահովագրման գործընթացում ներգրավել նաեւ այն խավերին, որոնց ծառայությունները կապված են ռազմական իրավիճակներով ու հանցավորության դեմ պայքարով պայմանավորված վտանգների հետ: Տվյալ բնագավառներում ծառայողները, բնականաբար, կոնկրետ դեպքերում սոցիալական վճարներ ստանում են, բայց ապահովագրվելով «Գրիար-ինշուրանսում»՝ անկախ նրանից, թե ծառայողն ինչ հանգամանքներում է տուժել, նա համապատասխան փոխհատուցում կստանա ապահովագրական ընկերության կողմից:

Ինչ մնում է շրջաններում եւս ապահովագրման հավասար հնարավորություններ ստեղծելու անհրաժեշտությանը, մասնաճյուղի ղեկավարը հավաստիացրեց, որ ապահովագրման գործընթացում խստական երեւույթներն ու բյուրոկրատական քաշքշուկները բացառվելու են:

ԿԻՄ ՉԱԲԲԻԵՎՅԱՆ
Ստեփանակերտ

ՌԵՊԼԻԿԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայաստանի հոգեւոր աշխարհը քանդում են աջից ու ձախից...

Հայաստանի հոգեւոր աշխարհը քանդում են՝ Արեւմուտքից ու Արեւելքից, Հյուսիսից ու Հարավից...

Քանդում են մարդասիրական օգնության շոյանքով, ազատության ու արդարության դաս տալու գուրգուրանքով...

Հայաստանում քրիստոնեություն քարոզելու պատրվակով, հնամենի քրիստոնյա Հայաստանն են քանդում, վայ մե...

Քանդում են եթերից, անբարո ու սադիզմ սերմանող ֆիլմերի ցուցադրումից, մարդկային ներաշխարհը բթացնող հաղորդումներից...

Հայաստանը քանդում են տգիտուկ, փափուկ անկյուններում բուն դրած որոշ գրասենյակներից ու կազմակերպություններից...

Քանդում են կասկածելի գրանտներով, զարմանազան իզմերի ու նյուսերի ֆոնդերով...

Պարզապես, մեր իսկ ձեռքով նպատակասլաց ձեւով քանդում են ու քանդում...

Եվ ինչքա՞ն հեշտ ենք տրվում:

Հայաստանը քանդում են նախանձախնդիր անկշռությունից, մեկ օրում հարստանալու մոլուցքից ու տենդից...

Մոլագար կաշառակերությունն ու վերնախավի անպատժելիությունն են քանդում Հայաստանը...

Հայաստանը քանդում են երիտասարդ, տաղանդավոր գիտնականներին ու արվեստագետներին 20-ամյա էմիգրանտ դարձնողները...

Հայաստանը քանդում են փուչ քաղաքագետներն ու սուտ ատենապետները...

Քանդում են անխնա, նույնիսկ հայոց լեզուն են տեսողական դաշտից վանում...

Մի հարցնող չկա, թե էս ի՞նչ ենք անում, ինչո՞ւ ենք մեր մատով մեր աչքը հանում:

Այսքան հոռետես ասելիքից հետո դիմենք Վիլյամ Սարոյանին.

«... Համարձակվեք բնաջնջել այս սերունդը...

Սեղեք, թե դարձյալ 1915-ի համաշխարհային պատերազմ է, քանդեք Հայաստանը, տեսե՛ք, թե կրնա՞ք: Ախորժեք իրենց տաներեն դեպի անապատները, ձգե՛ք առանց հացի եւ ջրի, այրեք անոնց տուներն ու եկեղեցիները: Տեսե՛ք, թե անոնք ինչպես պիտի վերածնին: Տեսե՛ք, թե անոնք ինչպես պիտի խնդան:

Դուք, շան լակոտնե՛ր, համարձակվեք բնաջնջել զիրենք...»:

ՌՈԲԵՐՏ ՄԱԹՈՍՅԱՆ

www. azg.am

ՕԳՆՈՒԹՅՈՒՄ

ՃԱՄՓՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատունն ընդունում է առաջարկներ պաշտոնական գործուղումների հետ կապված ճամփորդական ծառայությունների մատուցման վերաբերյալ: Առաջարկ ներկայացնողները պետք է լինեն Հայաստանում ճամփորդական ծառայությունների ոլորտի գործող ընկերություններ եւ հնարավորություն ունենան մատուցել մեծ ծավալների հասնող ծառայություններ: Հետաքրքրված կազմակերպությունները, սկսած ս.թ. օգոստոսի 17-ից, կարող են առաջարկների ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ձեռք բերել ԱՄՆ դեսպանատնից, հասցեն՝ q. Երեւան, Ամերիկյան փողոց 1:

Cucina
The Italian Kitchen
Marriott
ARMENIA YEREVAN
Սկսած օգոստոսի 17-ից մինչև 31-ը
Նայեք ջերմաստիճանը դրսում և կտեսնեք, թե ինչքան զեղչ ունեք Կուչինայում
Զովացրեք ամառային տապը Կուչինայի զեղչով
Հեռուստացույցով ներկայացվող եղանակի տվյալ պահի ջերմաստիճանը ցույց կտա Ձեր զեղչի չափը
Չի վերաբերվում գործող այլ առաջարկությունների
Կիրառվում է միայն սննդին, իսկ խմիչքին՝ ոչ
The Place to be in Yerevan Զանգահարեք 599 248

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԿԱՐԵՎՈՐ Է

«Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ» իրավաբանական անձանց միությունը նպատակահարմարության տեսակետից հայտնում է, որ գազի սարքավորումներից օգտվելուց առաջ պետք է օդափոխել շինությունը, որտեղ տեղադրված են գազային սարքավորումները: Նախքան օգտվելը ստուգել ծխնելույզների քարշի առկայությունը, միեւնույն ժամանակ հորիզոնական թիթեղյա խողովակների միացումները, քարշի առկայության դեպքում միայն օգտվել գազասարքից:

Ծխաօդափոխության ուղիների բացակայությունը, սխալ կառուցումը, անսարքությունը, քարշի նվազեցումը կարող են ծանր ողբերգությունների եւ դժբախտ դեպքերի առիթ դառնալ:

Ծխնելույզների քարշի նվազեցման թուլության կամ բացակայության ժամանակ, գազի թերայրման հետեւանքով առաջանում է ածխածնի օքսիդ (շմոլ գազ), որը ուժեղ թունավոր գազ է եւ դրա աննշան քանակության առկայությունը շինությունում կարող է թունավորման պատճառ դառնալ:

Խորհուրդ է տրվում նման դեպքում անմիջապես մարել ծխնելույզները եւ նոր միայն օգտագործել գազասարքերը: Բնական գազից անվտանգ օգտվելու եւ այն կենցաղում ապահով դարձնելու համար օգտվել միայն գործարանային արտադրության եւ ավտոմատ հագեցված գազասարքերից: Օգտագործվող գազասարքերը չթողնել առանց հսկողության եւ շահագործել միայն ընտանիքի չափահաս անդամների կողմից: Հայտնում ենք, որ ծխնելույզների մարման եւ վերանորոգման աշխատանքները նաեւ կատարում են «Հայաստանի հրեջ անվտանգության մասնագիտացված ծառայություններ իրավաբանական անձանց միության անդամագրված տնտեսական ընկերությունները:

Խնդրում եւ տեղեկացնում ենք ազգաբնակչությանը, որ առանձնատներում եւ բնակարաններում գազի վերականգնման, ինչպես նաեւ նոր գազաֆիկացման ժամանակ ծխաօդափոխության ուղիների ստուգումը եւ մարումը ծխնելույզգործները կատարեն բնակչի անմիջական ներկայությամբ:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարել միայն քաղաքացիաիրավական պայմանագրի, ծխաօդատար ուղիների տեխնիկական վիճակի ակտի եւ դրամարկղային մուտքի կտրոն ստանալու ժամանակ:

Համաձայն բնական գազի օգտագործման կանոնների պահանջների՝ ջերմամեկուսացված բետոնի բլոկներից եւ ազբոցեմենտի խողովակից պատրաստված ծխնելույզները պետք է մարվեն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իսկ աղյուսից եւ քարից՝ տարին երկու անգամ:

Չի թույլատրվում հատկապես բազմաբնակարան շենքերի ծխնելույզները բնակիչների կողմից ինքնուրույն փոփոխությունների ենթարկել, մարել ու վերանորոգել, դրանով կարող են զրկել իրենց եւ հարեւաններին ծխնելույզների ճիշտ շահագործումից՝ ստեղծելով դժբախտ դեպքերի առիթներ:

Սիրելի՛ հայրենակիցներ, հոդվածն ընթերցելիս այն ընկալել որպես նպատակահարմարության տեսակետ:

Ծխնելույզների մարման, վերանորոգման համար զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 44-34-32:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐՇԵՋ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Կորել է

«Անդրուշ Մովսիսյան» ՍՊԸ-ի պետ. գրանցման վկայականը՝ 02 Ա 05 00 94, գրանցման համար՝ 31.110.00913, ամսաթիվ 20.03.2001 թ.: Համարել անվավեր:

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.08.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: